

Կ Ո Ն Վ Ե Ն Օ Ի Ա

Կ Ե Ն Ս Ա Բ Ա Ն Ա Կ Ա Ն
Բ Ա Չ Մ Ա Չ Ա Ն Ո Ի Թ Յ Ա Ն
Մ Ա Ս Ի Ն

Տ Ե Բ Ս Տ Ե Կ Զ Ա Վ Ե Լ Վ Ա Ց Ն Ե Ր

**Հայաստանի Հանրապետություն
Բնապահպանության նախարարություն**

**Բնական պաշարների կառավարման և
չքավորության նվազեցման ծրագիր**

**«Աջակցություն բարեփոխումներին»
հասարակական կազմակերպություն**

Ներածություն

Երկրագնդի կենսաբանական պաշարները կենսականորեն անհրաժեշտ են մարդկության տնտեսական և սոցիալական զարգացման համար: Ուստի գնալով ավելի մեծ ճանաչում է ստանում այն փաստը, որ կենսաբանական բազմազանությունը հսկայական արժեք ունեցող համաշխարհային հարստություն է ներկա և ապագա սերունդների համար: Մինևույն ժամանակ այսօր, ինչպես երբեք, մեծ վտանգ է սպառնում տեսակների և էկոհամակարգերի գոյությանը: Սպառնալի տեմպերով շարունակվում է տեսակների անհետացումը՝ պայմանավորված մարդու գործունեությամբ:

Ի պատասխան այդ փոփոխությունների, Միավորված Ազգերի Կազմակերպության Շրջակա միջավայրի ծրագիրը (UNEP) 1988 թվականի նոյեմբերին կազմավորեց Կենսաբանական բազմազանության փորձագետների հատուկ աշխատանքային խումբ՝ կենսաբանական բազմազանության մասին միջազգային կոնվենցիայի մշակման անհրաժեշտությունն ուսումնասիրելու նպատակով: Շուտով, 1989 թվականի մայիսին, այն հիմնադրեց Տեխնիկական և իրավական հարցերով փորձագետների հատուկ աշխատանքային խումբ՝ կենսաբանական բազմազանության պահպանման և կայուն օգտագործման վերաբերյալ միջազգային իրավական փաստաթուղթ նախապատրաստելու համար: Փորձագետները պետք է հաշվի առնեին «զարգացած և զարգացող երկրների միջև ծախսերի և օգուտների բաշխման անհրաժեշտությունը», ինչպես նաև «տեղերում իրականացվող արդիական նախագծերին օժանդակելու ուղիները և միջոցները»:

1991 թվականի փետրվարից Հատուկ աշխատանքային խումբն անվանվեց Բանակցությունների վարման միջկառավարական կոմիտե: Դրա աշխատանքի արդյունք հանդիսացավ Կենսաբանական բազմազանության մասին Կոնվենցիայի համաձայնեցված տեքստի ընդունման նպատակով 1992 թվականի մայիսի 22-ին Նայրոբի քաղաքում կայացած Կոնֆերանսը:

Կոնվենցիան ստորագրման համար բացվել էր 1992 թվականի հունիսի 5-ին Ռիո դե Ժանեյրոյում Միավորված Ազգերի Կազմակերպության Շրջակա միջավայրի և զարգացման կոնֆերանսում («Երկիր մոլորակը» բարձր մակարդակով հանդիպում): Այդ Կոնվենցիան բաց էր ստորագրման համար մինչև 1993 թվականի հունիսի 4-ը, և այդ պահին այն ստորագրել էին 168 կողմեր: Կոնվենցիան ուժի մեջ է մտել 1993 թվականի դեկտեմբերի 29-ին, 30 պետությունների կողմից այն վավերացնելուց հետո 90-րդ օրը: Կողմերի Կոնֆերանսի առաջին նստաշրջանը նախատեսված էր անցկացնել 1994 թվականի նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 9-ը՝ Բահամյան կղզիներում:

Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիան կայուն զարգացման սկզբունքներին համաշխարհային հանրության նվիրվածության արտացոլումն է: Այն էական քայլ է հանդիսանում դեպի առաջ՝ կենսաբանական բազմազանության պահպանման, դրա բաղադրամասերի կայուն օգտագործման և արդար ու հավասար հիմունքներով գեներտիկ պաշարների օգտագործման հետ կապված օգուտներին համատեղ ստացման ճանապարհին:

**RA Ministry of Environmental Protection
Program For Natural Resource
Management and Poverty Reduction**

C O N V E N T I O N

ON BIOLOGICAL DIVERSITY

T E X T A N D A N N E X E S

«Assistance to Reforms» NGO

Yerevan 2005

INTRODUCTION

Biological resources of the Earth have an essential importance for economic and social development of humanity. Therefore the fact that biodiversity is a precious global asset for present and future generation is obtaining major recognition. At the same time, today, as never before, there is a great threat for the existence of species and ecosystems. Extinction of species is going on with threatening tendency because of human activities.

In regard to these changes United Nations Environmental Program (UNEP) established a Special Working Group of Experts on Biological Diversity in November 1988 to survey the necessity of developing an international convention on biological diversity. Soon, in May 1989, a Special Working Group of Technical and Legal Experts was established to prepare an international legal instrument for the conservation and sustainable use of biological diversity. The experts had to take into consideration "the requirement for sharing the expenses and benefits between the developed and developing countries" as well as "ways and facilities for supporting locally implemented modern designs".

Since February 1991, the Special Working Group was named as Intergovernmental Negotiating Committee. The result of its activities was the Conference held in city Nairobi on May 22, 1992 for adoption of an agreed text of the Convention on Biological Diversity.

The Convention was opened for signature at Rio de Janeiro on June 5, 1992 at United Nations Conference on Environment and Development ("Earth Summit,") held in Rio de Janeiro. This conference was open for signature till June 4, 1993 and as of that date there were 168 signatures to the Convention. The convention entered into force on 29 December 1993, on the 90-th day after ratification by 30 states. The first session of the conference of the parties was planned to hold from November 28, to December 9, 1994 in Bahamas Islands.

The Convention on Biological Diversity is the reflection of the world population allegiance to the principles of sustainable development. It is an essential step forward to conservation of biological diversity, sustainable use of its components and fair and equitable sharing of the benefits arising out of the utilization of genetic resources.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. ԿՈՆՎԵՆՑԻԱ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ
ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 7

2. ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿԱՐԹԱԳԵՆՅԱՆ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 61

ԿՈՆՎԵՆՑԻԱ

ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԲԱՆ

Պայմանավորվող Կողմերը,

գիտակցելով կենսաբանական բազմազանության անանց արժեքը, ինչպես նաև կենսաբանական բազմազանություն և դրա բաղադրամասերի էկոլոգիական, գենետիկական, սոցիալական, տնտեսական, գիտական, դաստիարակչական, մշակութային, ռեկրեացիոն և գեղագիտական նշանակությունը,

գիտակցելով նաև կենսաբանական բազմազանության մեծ նշանակությունը էկոլոցիայի և կյանքն ապահովող կենսոլորտի համակարգերի պահպանման համար,

հաստատելով, որ կենսաբանական բազմազանության պահպանումը ողջ մարդկության ընդհանուր խնդիրն է հանդիսանում,

վերստին հաստատելով պետությունների ինքնիշխան իրավունքներն իրենց սեփական կենսաբանական պաշարների նկատմամբ,

հաստատելով նաև, որ պետությունները պատասխանատվություն են կրում իրենց կենսաբանական բազմազանության պահպանման և կենսաբանական պաշարների կայուն օգտագործման համար,

մտահոգված լինելով, որ կենսաբանական բազմազանությունն էապես կրճատվում է մարդկային գործունեության որոշակի տեսակների արդյունքում,

գիտակցելով կենսաբանական բազմազանությանը վերաբերող տեղեկատվության և գիտելիքների ընդհանուր պակասությունը, և գիտական, տեխնիկական ու կազմակերպչական ներուժի զարգացման անհետաձգելի անհրաժեշտությունը՝ այդ հիմնախնդրի ընդհանուր ըմբռնումն ապահովելու նպատակով, ինչը հիմք կծառայի համապատասխան միջոցների պլանավորման և իրականացման համար,

նշելով, որ անհրաժեշտ է կանխատեսել, կանխարգելել և հիմքում վերացնել կենսաբանական բազմազանության զգալի կրճատման կամ կորստի պատճառները,

նշելով նաև, որ այն դեպքերում, երբ կենսաբանական բազմազանության զգալի կրճատման կամ կորստի վտանգ կա, անվիճարկելի գիտական փաստերի բացակայությունը չպետք է պատճառ հանդիսանա մնան վտանգի վերացմանն ուղղված միջոցների կիրառումը հետաձգելու կամ նվազագույնի հասցնելու համար,

նշելով այնուհետև, որ կենսաբանական բազմազանության պահպանման հիմնական պայմանն է կոհամակարգերի և բնակության բնական վայրերի *in-situ* պահպանումը, իրենց բնական պայմաններում տեսակների կենսունակ պոպուլյացիաների պահպանումն ու վերականգնումը,

նշելով այնուհետև, որ *ex-situ* միջոցների ձեռնարկումը, նախաընտրելի է՝ ծագման երկրում, նույնպես կարևոր նշանակություն ունի,

ճանաչելով ավանդական ապրելակերպի պահպան հանդիսացող բազմաթիվ տեղական համայնքների ու բնիկների մեծ և ավանդական կախվածությունը կենսաբանական պաշարներից, արդար հիմունքներով կենսաբանական բազմազանության պահպանման և դրա բաղադրամասերի կայուն օգտագործմանը վերաբերող ավանդական գիտելիքների, նորամուծությունների և փորձի օգտագործման հետ կապված օգուտներից համատեղ օգտվելու ցանկալիությունը,

Ճանաչելով նաև կանանց կենսականորեն կարևոր դերը կենսաբանական բազմազանության պահպանման և դրա բաղադրամասերի կայուն օգտագործման գործում և հաստատելով բոլոր մակարդակներում կենսաբանական բազմազանության պահպանմանն ուղղված քաղաքականության մշակման և իրագործման մեջ կանանց լիարժեք մասնակցության անհրաժեշտությունը,

ընդգծելով կենսաբանական բազմազանության պահպանման և դրա բաղադրամասերի կայուն օգտագործման գործում պետությունների, միջկառավարական կազմակերպությունների և ոչ պետական հատվածի միջև միջազգային, տարածաշրջանային և գլոբալ համագործակցության խրախուսման մշակակությունն ու անհրաժեշտությունը,

ընդունելով, որ նոր և լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների տրամադրման ու համապատասխան տեխնոլոգիաների պատշաճ մատչելիության ապահովման ճանապարհով հնարավոր կլինի զգալիորեն ընդլայնել կենսաբանական բազմազանության կորստի հիմնախնդրի լուծման համար աշխարհում գոյություն ունեցող հնարավորությունները,

ընդունելով այնուհետև, որ զարգացող երկրների կարիքների բավարարման համար պահանջվում է հատուկ դրույթ, ներառյալ նոր և լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների տրամադրումը և համապատասխան տեխնոլոգիաների պատշաճ մատչելիության ապահովումը,

մշելով այս առնչությամբ առավել թույլ զարգացած երկրների և փոքր կղզյակային պետությունների հատուկ պայմանները,

ընդունելով, որ կենսաբանական բազմազանության պահպանումը զգալի կապիտալ ներդրումներ է պահանջում, և որ այդպիսի կապիտալ ներդրումներից ակնկալվում է մեծ քանակի էկոլոգիական, տնտեսական և սոցիալական օգուտների ստացում,

ընդունելով, որ տնտեսական և սոցիալական զարգացումն ու աղքատ

տության վերացումը զարգացող երկրների առաջնային և գերակա խնդիրներն են հանդիսանում,

գիտակցելով, որ կենսաբանական բազմազանության պահպանումը և կայուն օգտագործումը երկրագնդի աճող բնակչության պարենի և առողջապահության, ինչպես նաև այլ կարիքների բավարարման համար վճռական նշանակություն ունի, և որ գենետիկական պաշարների և տեխնոլոգիաների մատչելիությունը և դրանց համատեղ օգտագործումը կարևոր նշանակություն ունեն այդ խնդիրների լուծման համար,

նշելով, որ վերջին հաշվով կենսաբանական բազմազանության պահպանումը և կայուն օգտագործումը կամրապնդեն պետությունների միջև բարեկամական հարաբերությունները և կաջակցեն խաղաղության ամրապնդմանը ողջ մարդկության համար,

ցանկանալով ամրապնդել և լրացնել կենսաբանական բազմազանության և դրա բաղադրամասերի կայուն օգտագործման մասին գոյություն ունեցող միջազգային համաձայնագրերը, և

վճռական լինելով պահպանել և կայուն օգտագործել կենսաբանական բազմազանությունը՝ ի շահ ներկա և ապագա սերունդների,

պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

ՆՊԱՏԱԿՆԵՐ

Սույն Կոնվենցիայի նպատակները, որոնց հասնելուն հարկ է ձգտել համաձայն իր իսկ համապատասխան դրույթների, հանդիսանում են կենսաբանական բազմազանության պահպանումը, դրա բաղադրամասերի կայուն օգտագործումն ու արդար և հավասար հիմունքներով գենետիկական պաշարների օգտագործման հետ կապված օգուտների համա-

տեղ ստացումը, այդ թվում՝ գենետիկական պաշարների անհրաժեշտ մատչելիության ապահովման և համապատասխան տեխնոլոգիաների փոխանցման ճանապարհով՝ հաշվի առնելով այդպիսի պաշարների և տեխնոլոգիաների նկատմամբ բոլոր իրավունքները, ինչպես նաև պատշաճ ֆինանսավորման միջոցով:

Հոդված 2

ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Սույն Կոնվենցիայի նպատակների համար.

«*Կենսաբանական բազմազանություն*» նշանակում է՝ կենդանի օրգանիզմների տարատեսակությունը բոլոր աղբյուրներից, ներառելով մասնավորապես՝ ցամաքային, ծովային և այլ ջրային էկոհամակարգերն ու էկոլոգիական համալիրները, որոնց մասն են դրանք հանդիսանում. այս հասկացությունն ընդգրկում է բազմազանությունը տեսակի շրջանակներում, տեսակների միջև և էկոհամակարգերի բազմազանությունը:

«*Կենսաբանական պաշարներն*» ընդգրկում են մարդկության համար փաստացի կամ պոտենցիալ օգտակարություն կամ արժեք ունեցող գենետիկական պաշարները, օրգանիզմները կամ դրանց մասերը, պոպուլյացիաները և էկոհամակարգերի ցանկացած այլ կենսական բաղադրամասերը:

«*Կենսատեխնոլոգիա*» նշանակում է՝ կենսաբանական համակարգերի, կենդանի օրգանիզմների կամ դրանց արտադրյալների օգտագործման հետ կապված տեխնոլոգիայի ցանկացած ձև՝ կոնկրետ օգտագործման նպատակով արտադրանքի կամ գործընթացների պատրաստման կամ փոփոխման համար:

«*Գենետիկական պաշարների ծագման երկիր*» նշանակում է՝ երկիր, որը *in-situ* պայմաններում տիրապետում է այդ գենետիկական պաշարներին:

«Գենետիկական պաշարներ տրամադրող երկիր» նշանակում է՝ երկիր, որը տրամադրում է *in-situ* աղբյուրներից հավաքված գենետիկական պաշարներ՝ ներառյալ վայրի և ընտելացված տեսակների, կամ էլ *ex-situ* աղբյուրներից ստացված պոպուլյացիաները, անկախ նրանից ծագել են դրանք այդ երկրում թե ոչ:

«Ընտելացված կամ մշակվող տեսակներ» նշանակում է՝ տեսակներ, որոնց էվոլյուցիայի գործընթացն ազդեցության է ենթարկվում մարդու կողմից՝ իր իսկ կարիքների բավարարման նպատակով:

«Էկոհամակարգ» նշանակում է՝ բույսերի, կենդանիների և միկրոօրգանիզմների համակեցությունների, ինչպես նաև դրանց ոչ կենդանի շրջակա միջավայրի դինամիկ համալիր, որոնք փոխազդում են որպես միասնական գործառնական ամբողջություն:

«*Ex-situ* պահպանում» նշանակում է՝ կենսաբանական բազմազանության բաղադրամասերի պահպանում դրանց բնակության բնական վայրերից դուրս:

«Գենետիկական նյութ» նշանակում է՝ ժառանգականության գործառնական միավորներ պարունակող բուսական, կենդանական, մանրէական կամ այլ ծագում ունեցող ցանկացած նյութ:

«Գենետիկական պաշարներ» նշանակում է՝ փաստացի կամ պոտենցիալ արժեք ներկայացնող գենետիկական նյութ:

«Բնակության միջավայր» նշանակում է՝ այս կամ այն օրգանիզմի կամ պոպուլյացիայի բնական բնակության տեղանքի տեսակ կամ վայր:

«*In-situ* պայմաններ» նշանակում է՝ պայմաններ, որոնցում գոյատևում են գենետիկական պաշարները՝ էկոհամակարգերի և բնակության բնական վայրերի շրջանակներում, իսկ կիրառելով ընտելացված կամ մշակվող տեսակների նկատմամբ՝ այն միջավայրում, որտեղ դրանք ձեռք են բերել իրենց բնորոշ հատկանիշները:

«*In-situ պահպանում*» նշանակում է էկոհամակարգերի և բնակության բնական վայրերի պահպանում, ինչպես նաև տեսակների կենսունակ պոպուլյացիաների պահպանումը և վերականգնումն իրենց բնական միջավայրում, իսկ կիրառելի ընտելացված կամ մշակվող տեսակների նկատմամբ՝ այն միջավայրում, որտեղ դրանք ծեռք են բերել իրենց բնորոշ հատկանիշները:

«*Պահպանվող տարածք*» նշանակում է՝ աշխարհագրորեն նշված տարածք, որն առանձնացվում, կարգավորվում և օգտագործվում է որոշակի բնապահպանական նպատակների հասնելու համար:

«*Տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպություն*» նշանակում է՝ տվյալ տարածաշրջանի ինքնիշխան պետությունների կողմից ստեղծված կազմակերպություն, որին դրա անդամ պետությունները փոխանցել են սույն Կոնվենցիայով կարգավորվող հարցերով լիազորություններ, և որը, իր ներքին ընթացակարգերին համապատասխան, պատշաճ ձևով լիազորված է ստորագրելու, վավերացնելու, ընդունելու, հավանություն տալու Կոնվենցիան կամ միանալու դրան:

«*Կայուն օգտագործում*» նշանակում է՝ կենսաբանական բազմազանության բաղադրամասերի օգտագործումը այնպիսի ձևով և տեմպերով, որոնք երկարաժամկետ հեռանկարում չեն հանգեցնում կենսաբանական բազմազանության սպառմանը, դրանով իսկ պահպանելով ներկա և ապագա սերունդների կարիքները բավարարելու և սպասումներն արդարացնելու դրա ներուժը:

«*Տեխնոլոգիա*»՝ ներառում է կենսատեխնոլոգիան:

Հոդված 3

ՍԿԶՐՈՒՆԵԸ

Միավորված Ազգերի Կազմակերպության Կանոնադրության և միջազգային իրավունքի սկզբունքների համաձայն՝ պետություններն ինքնիշխան իրավունք ունեն շահագործելու իրենց սեփական պաշարները՝ շրջակա միջավայրի բնագավառում իրենց քաղաքականությանը համապատասխան և պատասխանատվություն են կրում այն բանի ապահովման համար, որպեսզի իրենց իրավագործության շրջանակներում կամ իրենց հսկողության ներքո իրականացվող գործունեությունը մյուս պետությունների կամ ազգային իրավագործության սահմաններից դուրս գտնվող շրջանների շրջակա միջավայրին վնաս չհասցնի:

Հոդված 4

ԻՐԱՎԱԶՈՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ

Այլ պետությունների իրավունքների պահպանման պայմանի դեպքում և եթե սույն Կոնվենցիայում բացահայտորեն այլ բան նախատեսված չէ, սույն Կոնվենցիայի դրույթները կիրառվում են յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմի նկատմամբ.

ա) այն մասով, որն իր ազգային իրավագործության սահմաններում վերաբերում է կենսաբանական բազմազանության բաղադրամասերին, և

բ) այն մասով, որը վերաբերում է այնպիսի գործընթացներին և գործունեությանը, անկախ դրանց հետևանքների արտահայտման վայրից, որոնք տեղի են ունենում նրա իրավագործության կամ հսկողության ներքո, ինչպես նրա ազգային իրավագործության սահմաններում, այնպես էլ ազգային իրավագործության սահմաններից դուրս:

Հոդված 5

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ, որքանով դա հնարավոր է և տեղին, համագործակցում է մյուս Պայմանավորվող Կողմերի հետ՝ ուղղակիորեն կամ, եթե դա տեղին է, իրավասու միջազգային կազմակերպությունների միջոցով, ազգային իրավագործության սահմաններից դուրս գտնվող շրջանների վերաբերյալ և փոխադարձ հետաքրքրությունն ներկայացնող այլ հարցերում կենսաբանական բազմազանության պահպանման և կայուն օգտագործման նպատակով:

Հոդված 6

ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒ ԿԱՅՈՒՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆՆ ՈՒՂՂԱԾ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՆԵՐ

Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ՝ իր որոշակի պայմաններին ու հնարավորություններին համապատասխան.

ա) մշակում է կենսաբանական բազմազանության պահպանման և կայուն օգտագործման ազգային ռազմավարություններ, պլաններ կամ ծրագրեր կամ այդ նպատակով հարմարեցնում է գոյություն ունեցող ռազմավարությունները, պլանները կամ ծրագրերը, որոնք արտացոլում են, մասնավորապես, համապատասխան Պայմանավորվող կողմին վերաբերվող սույն Կոնվենցիայում շարադրված միջոցները, և

բ) ինտեգրում է, որքանով դա հնարավոր է և նպատակահարմար, կենսաբանական բազմազանության պահպանմանն ու կայուն օգտագործմանն ուղղված միջոցները՝ համապատասխան ոլորտային կամ միջոլորտային պլաններում, ծրագրերում և քաղաքականության մեջ:

Հոդված 7

ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄ ԵՎ ՍՈՆԻՏՈՐԻՆԳ

Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ, որքանով դա հնարավոր է և նպատակահարմար, մասնավորապես, 8-10 հոդվածների նպատակների համար.

ա) բացահայտում է կենսաբանական բազմազանության բաղադրամասերը, որոնք կարևոր նշանակություն ունեն դրա պահպանման և կայուն օգտագործման համար՝ հաշվի առնելով Հավելված I-ում բերված կատեգորիաների մտավոր ցանկը;

բ) նմուշների ընտրության և այլ մեթոդների միջոցով իրականացնում է վերևում բերված ա) ենթակետին համապատասխան բացահայտված կենսաբանական բազմազանության բաղադրամասերի մոնիտորինգ, հատուկ ուշադրության դարձնելով այնպիսիներին, որոնք պահպանման անհետաձգելի միջոցների ձեռնարկում են պահանջում, ինչպես նաև այնպիսիներին, որոնք կայուն օգտագործման առավելագույն հնարավորություններ են բացում;

գ) բացահայտում է գործունեության այն գործընթացներն ու կատեգորիաները, որոնք զգալի ոչ բարենպաստ ազդեցություն են գործում կամ կարող են գործել կենսաբանական բազմազանության պահպանման և կայուն օգտագործման վրա, և իրականացնում է դրանց հետևանքների մոնիտորինգ՝ նմուշների ընտրության և այլ մեթոդների միջոցով; և

դ) այս կամ այն ձևով հավաքում և կարգավորում է բացահայտման և մոնիտորինգի միջոցառումների արդյունքում ստացված տվյալները՝ վերևում բերված ա), բ) և գ) ենթակետերին համապատասխան:

Հոդված 8

IN-SITU ՊԱՅՊԱՆՈՒՄ

Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ, որքանով դա հնարավոր է և նպատակահարմար.

ա) ստեղծում է պահպանվող տարածքների կամ կենսաբանական բազմազանության պահպանման համար հատուկ միջոցների կիրառման անհրաժեշտություն ունեցող տարածքների համակարգ;

բ) անհրաժեշտության դեպքում մշակում է պահպանվող տարածքների կամ կենսաբանական բազմազանության պահպանման համար հատուկ միջոցների կիրառում պահանջող տարածքների ընտրության, ստեղծման և արդյունավետ օգտագործման ղեկավար սկզբունքներ;

գ) կարգավորում կամ արդյունավետ օգտագործում է կենսաբանական պաշարները, որոնք կարևոր նշանակություն ունեն պահպանվող տարածքներում կամ դրանց սահմաններից դուրս կենսաբանական բազմազանության պահպանման համար՝ դրանց պահպանման և կայուն օգտագործման ապահովման նպատակով;

դ) աջակցում է էկոհամակարգերի, բնակության բնական վայրերի պահպանությանը և բնական պայմաններում տեսակների կենսունակ պոպուլացիաների պահպանմանը;

ե) խրախուսում է էկոլոգիապես հիմնավորված և կայուն զարգացումը պահպանվող տարածքներին հարող շրջաններում՝ այդ շրջանների պահպանմանն աջակցելու նպատակով;

զ) միջոցներ է ձեռնարկում քայքայված էկոհամակարգերի վերակենդանացման և վերականգնման ուղղությամբ և օժանդակում է վտանգված տեսակների վերականգնմանը, մասնավորապես, պլանների և արդյու-

նավետ օգտագործման այլ ռազմավարությունների մշակման և իրականացման միջոցով;

է) սահմանում կամ պահպանում է կարգավորման, վերահսկողության և ռիսկի սահմանափակման միջոցներ՝ կապված կենսատեխնոլոգիայի արդյունք հանդիսացող փոփոխված կենդանի օրգանիզմների օգտագործման կամ ազատ արձակման հետ, որոնք կարող են կենսաբանական բազմազանության պահպանման և կայուն օգտագործման վրա ունենալ վնասակար էկոլոգիական հետևանքներ՝ հաշվի առնելով նաև վտանգը մարդու առողջության համար;

ը) կանխում է էկոհամակարգերին, բնակության վայրերին կամ տեսակներիին սպառնացող օտարածին տեսակների ներմուծումը, վերահսկում կամ ոչնչացնում է այդպիսի օտարածին տեսակները;

թ) ձգտում է ստեղծել պայմաններ, որոնք անհրաժեշտ են գոյություն ունեցող օգտագործման ձևերի համատեղելիության ապահովման համար՝ պահպանելով կենսաբանական բազմազանությունը և կայուն օգտագործելով դրա բաղադրամասերը;

ժ) իր ազգային օրենսդրությանը համապատասխան ապահովում է բնիկ և տեղական համայնքների ավանդական ապրելակերպն արտացոլող, կենսաբանական բազմազանության պահպանման և կայուն օգտագործման համար նշանակություն ունեցող գիտելիքների, նորամուծությունների և փորձի հարգումը, պահպանումը և շարունակումը, նպաստում է դրանց ավելի լայն կիրառմանը նման գիտելիքներ, նորամուծություններ և փորձ կրողների համաձայնությամբ և մասնակցությամբ, ինչպես նաև խրախուսում է այդպիսի գիտելիքներից, նորամուծություններից և փորձից բխող օգուտներից արդար հիմունքներով հատել օգտվելը;

ի) մշակում կամ իրականացնում է անհրաժեշտ օրենսդրական նորմեր և/կամ այլ կարգավորող դրույթներ՝ վտանգված տեսակների և պոպուլյացիաների պահպանման համար;

լ) այն դեպքերում, երբ հողված 7-ի համաձայն հաստատվել է կենսաբանական բազմազանության վրա էական անբարենպաստ ազդեցության փաստը, կանոնակարգում կամ կարգավորում է համապատասխան գործընթացները և գործունեության տեսակները; և

խ) համագործակցում է *in-situ* պահպանման միջոցներին, ա)-լ) վերոշարադրյալ ենթակետում ցուցաբերելով ֆինանսական և այլ աջակցություն՝ հատկապես զարգացող երկրներում:

Հոդված 9

EX-SITU ՊԱՅՊԱՆՈՒՄ

Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ, որքանով դա հնարավոր է և նպատակահարմար, և, առաջին հերթին, *in-situ* միջոցների լրացման համար.

ա) միջոցներ է ձեռնարկում կենսաբանական բազմազանության բաղադրիչների *ex-situ* պահպանման համար, նախընտրելի է այդպիսի բաղադրիչների ծագման երկրում;

բ) ստեղծում և պահպանում է պայմաններ՝ բույսերի, կենդանիների և միկրոօրգանիզմների *ex-situ* պահպանման և հետազոտության համար, նախընտրելի է գենետիկական պաշարների ծագման երկրում;

գ) միջոցներ է ձեռնարկում վտանգված տեսակների վերականգնման և վերակենդանացման համար և համապատասխան պայմաններում բնական տարածման վայրերում դրանց վերաբնակեցման համար;

դ) կանոնակարգում և կարգավորում է *ex-situ* պահպանման նպատակների համար բնակության բնական վայրերից կենսաբանական պաշարների հավաքումը՝ *in-situ* էկոհամակարգերի և տեսակների պոպուլյացիաների համար վտանգ չստեղծելով, բացառությամբ այն դեպքերի,

երբ պահանջվում է հատուկ ժամանակավոր *ex-situ* միջոցների կիրառումը՝ վերոշարադրյալ գ) ենթակետին համապատասխան; և

ե) համագործակցում է, վերևում բերված ա)-դ) ենթակետերում շարադրված, *ex-situ* պահպանման միջոցներին ֆինանսական և այլ աջակցման, ինչպես նաև զարգացող երկրներում *ex-situ* պահպանման համար պայմանների ստեղծման և աջակցման գործում:

Հ ո դ վ ա ծ 10

ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴԻՐՉՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ, որքանով դա հնարավոր է և նպատակահարմար.

ա) նախատեսում է ազգային մակարդակով որոշումների ընդունման գործընթացում կենսաբանական պաշարների պահպանման և կայուն օգտագործման հարցերի քննարկում;

բ) միջոցներ է ձեռնարկում կենսաբանական պաշարների օգտագործման բնագավառում, որպեսզի կանխվի կամ նվազագույնի հասցվի կենսաբանական բազմազանության վրա անբարենպաստ ազդեցությունը;

գ) պահպանում և խրախուսում է կենսաբանական պաշարների օգտագործման ավանդական եղանակները, ձևավորված մշակութային սովորույթներին համապատասխան, որոնք համատեղելի են պահպանման կամ կայուն օգտագործման պահանջների հետ;

դ) տուժած շրջաններում, ուր տեղի է ունեցել կենսաբանական բազմազանության կրճատում, դրուսթյունը շտկելու համար միջոցների մշակ-

ման և իրականացման գործում օժանդակություն է ցուցաբերում տեղական բնակչությանը; և

ե) խրախուսում է կենսաբանական ռեսուրսների կայուն օգտագործման մեթոդների մշակման գործում իր երկրի կառավարական մարմինների և մասնավոր հատվածի միջև համագործակցությունը:

Հոդված 11

ԽԹԱՆՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ ձեռնարկում է, որքանով դա հնարավոր է և նպատակահարմար, կենսաբանական բազմազանության բաղադրիչների պահպանումն ու կայուն օգտագործումը խթանող, տնտեսական և սոցիալական տեսակետներից արդարացված միջոցներ:

Հոդված 12

ՉԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Չաշվի առնելով զարգացող երկրների հատուկ կարիքները, Պայմանավորվող Կողմերը.

ա) մշակում և իրականացնում են գիտատեխնիկական ուսուցման և կադրերի պատրաստման ծրագրեր՝ կենսաբանական բազմազանության և դրա բաղադրիչների բացահայտման, պահպանման և կայուն օգտագործման միջոցների իրականացման համար և օժանդակում են այդպիսի ուսուցմանն ու կադրերի պատրաստմանը՝ զարգացող երկրների որոշակի կարիքների բավարարման համար:

բ) խրախուսում և խթանում են կենսաբանական բազմազանության պահպանմանն ու կայուն օգտագործմանը նպաստող հետազոտութ-

յունները, հատկապես զարգացող երկրներում, մասնավորապես, Կողմերի Կոնֆերանսի որոշումներին համապատասխան, որոնք ընդունվում են Գիտական, տեխնիկական և տեխնոլոգիական խորհրդատվությունների օժանդակ մարմնի հանձնարարականների հիման վրա; և

գ) 16, 18 և 20 հոդվածների դրույթներին համապատասխան, խրախուսում են կենսաբանական բազմազանության հետազոտությունների ընթացքում, կենսաբանական պաշարների պահպանման և կայուն օգտագործման մեթոդների մշակման ժամանակ ստացված գիտական արդյունքների օգտագործումը և համագործակցում են այդպիսի արդյունքների օգտագործման ոլորտում:

Հոդված 13

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԿՈՐՈՒՄ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՋՐԱՑՈՒՄ

Պայմանավորվող Կողմերը.

ա) խրախուսում և խթանում են կենսաբանական բազմազանության պահպանման կարևոր մշակակության և դրա համար պահանջվող միջոցների ըմբռնողությունը, ինչպես նաև դրա քարոզչությունը զանգվածային լրատվական միջոցներով և այդ հարցերի ներառումը ուսումնական ծրագրերում; և

բ) համապատասխան դեպքերում համագործակցում են մյուս պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ՝ ուսումնական ծրագրերի և կենսաբանական բազմազանության պահպանման և կայուն օգտագործման հարցերում հասարակայնության իրազեկության բարձրացման բնագավառում:

Հոդված 14

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՅԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՈՒՄ

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ, որքանով դա հնարավոր է և նպատակահարմար.

ա) ներդնում է էկոլոգիական փորձաքննություն պահանջող համապատասխան ընթացակարգեր իր առաջարկվող նախագծերի համար, որոնք կարող են էական անբարենպաստ ազդեցություն ունենալ կենսաբանական բազմազանության վրա, այդպիսի հետևանքները կանխելու կամ նվազագույնի հասցնելու նպատակով, և, երբ դա նպատակահարմար է, ապահովում է հնարավորություններ՝ այդպիսի ընթացակարգերում հասարակայնության մասնակցության համար;

բ) համապատասխան միջոցներ է ձեռնարկում իր ծրագրերի և քաղաքականության էկոլոգիական հետևանքների պատշաճ հաշվառման համար, որոնք կարող են կենսաբանական բազմազանության վրա էական անբարենպաստ ազդեցություն գործել;

գ) փոխադարձության հիման վրա աջակցում է ծանուցմանը, տեղեկատվության փոխանակման և խորհրդատվությունների անցկացման իր իրավագործության շրջանակներում կամ հսկողության ներքո իրականացվող այն գործունեության մասին, որը կարող է մյուս պետություններում կամ ազգային իրավագործության սահմաններից դուրս գտնվող շրջաններում կենսաբանական բազմազանության վրա էական անբարենպաստ ազդեցություն գործել՝ համապատասխան դեպքերում երկկողմ, տարածաշրջանային կամ բազմակողմ համաձայնագրերի կնքումը խրախուսելու ճանապարհով;

դ) մյուս պետությունների իրավագործության ներքո գտնվող շրջաններում կամ ազգային իրավագործության սահմաններից դուրս գտնվող

շրջաններում կենսաբանական բազմազանության համար անխուսափելի կամ լուրջ վտանգի կամ վնասի դեպքում, որոնց աղբյուրները գտնվում են իր իրավագործության կամ հսկողության ներքո, շտապ ծանուցում է պետություններին, որոնք կարող են տուժել այդպիսի վտանգից կամ վնասից, ինչպես նաև միջոցներ է ձեռնարկում այդպիսի վտանգի կամ վնասի կանխման կամ նվազագույնի հասցնելու ուղղությամբ; և

ե) աջակցում է ազգային միջոցառումներին՝ բնական կամ այլ պատճառներով առաջացած, կենսաբանական բազմազանության համար լուրջ և անխուսափելի վտանգ հանդիսացող գործողություններին կամ իրադարձություններին շտապ արձագանքելու համար, և խրախուսում է նման ազգային ջանքերը լրացնող միջազգային համագործակցությունը, և, որտեղ դա նպատակահարմար է ու համաձայնեցված է շահագրգիռ պետությունների կամ տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպությունների հետ, արտակարգ իրադրությունների համար մշակում է համատեղ պլաններ:

2. Անցկացվող հետազոտությունների հիման վրա Կողմերի Կոնֆերանսը քննարկում է պատասխանատվության և իրավիճակի շտկման հարցը, ներառյալ վերականգնումը և կենսաբանական բազմազանությանը հասցված վնասի հատուցումը, բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի պատասխանատվությունը զուտ ներքին հարց է հանդիսանում:

Հոդված 15

ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

1. Ճանաչելով սեփական բնական պաշարների նկատմամբ պետությունների ինքնիշխան իրավունքները՝ զենետիկական պաշարների մատչելիությունը որոշելու իրավունքը պատկանում է ազգային կառավարություններին և կարգավորվում է ազգային օրենսդրությամբ:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ ձգտում է պայմաններ ստեղծել գենետիկական պաշարների մատչելիությունն ավելի դյուրին դարձնելու համար՝ մյուս Պայմանավորվող Կողմերից դրանք էկոլոգիապես անվտանգ օգտագործելու նպատակով, և չկիրառել սույն Կոնվենցիայի նպատակներին հակասող սահմանափակումներ:

3. Սույն Կոնվենցիայի նպատակների համար՝ Պայմանավորվող Կողմից տրամադրվող և այս հոդվածում, ինչպես նաև 16 ու 19 հոդվածներում հիշատակվող գենետիկական պաշարներ են համարվում միայն այն պաշարները, որոնք ներկայացրել են այդպիսի պաշարների ծագման երկրներ հանդիսացող Պայմանավորվող Կողմերը, կամ էլ այն Կողմերը, որոնք ստացել են այդ գենետիկական պաշարները սույն Կոնվենցիային համապատասխան:

4. Տրամադրման դեպքում մատչելիությունն ապահովվում է փոխադարձ համաձայնեցված պայմաններով և կարգավորվում է սույն հոդվածի դրույթներով:

5. Գենետիկական պաշարների մատչելիությունը կարգավորվում է գենետիկական պաշարները տրամադրող Պայմանավորվող Կողմի նախնական հիմնավորված համաձայնության հիման վրա, եթե այդ Կողմն այլ որոշում չկայացնի:

6. Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ ձգտում է նախապատրաստել և անցկացնել գիտական հետազոտություններ, հիմնված մյուս Պայմանավորվող Կողմերից տրամադրվող գենետիկական պաշարների վրա, այդ Կողմերի լիարժեք մասնակցությամբ, և, երբ դա հնարավոր է, այդ Պայմանավորվող Կողմերի տարածքում:

7. Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ, 16 և 19 հոդվածներին համապատասխան, ձեռնարկում է պատշաճ օրենսդրական, վարչական կամ քաղաքական միջոցներ, և, երբ դա անհրաժեշտ է, 20 և 21 հոդվածների համաձայն ստեղծված ֆինանսական մեխանիզմի միջոցով, արդար և հավասար հիմունքներով հետազոտությունների և մշակումների

արդյունքների, ինչպես նաև նման պաշարներ տրամադրող Պայմանավորվող Կողմի հետ գեներտիկական պաշարների առևտրային կամ այլ օգտագործման արդյունքում ստացված օգուտները համատեղ օգտագործելու նպատակով:

Հոդված 16

ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴՐԱ ՓՈԽԱՆՑՈՒՄ

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ, ընդունելով, որ տեխնոլոգիան ներառում է կենսատեխնոլոգիան, և որ, ինչպես տեխնոլոգիայի մատչելիությունը, այնպես էլ Պայմանավորվող Կողմերի միջև դրա փոխանցումը հանդիսանում են սույն Կոնվենցիայի նպատակներին հասնելու կարևոր տարրերի, պարտավորվում է, սույն հոդվածի դրույթներին համապատասխան, տրամադրել և/կամ մյուս Պայմանավորվող Կողմերի համար դյուրին դարձնել այն տեխնոլոգիաների մատչելիությունը, որոնք կապ ունեն կենսաբանական բազմազանության պահպանման և կայուն օգտագործման հետ կամ ենթադրում են գեներտիկական պաշարների օգտագործում և էական վնաս չեն հասցնում շրջակա միջավայրին, ինչպես նաև այդպիսի տեխնոլոգիաների փոխանցում մյուս Պայմանավորվող Կողմերին:

2. Վերևում բերված կետ 1-ում նշված տեխնոլոգիայի մատչելիությունը և դրա փոխանցումը զարգացող երկրներին ապահովվում և/կամ հեշտացվում են արդար և առավել բարենպաստ, այդ թվում՝ արտոնյալ և նախընտրելի պայմաններով, եթե ձեռք է բերվել փոխադարձ համաձայնություն, և, երբ դա անհրաժեշտ է, 20 և 21 հոդվածների համաձայն ստեղծված ֆինանսավորման մեխանիզմին համապատասխան: Արտոնագրերով և մտավոր սեփականության այլ իրավունքներով պայմանավորված տեխնոլոգիաների դեպքում, նման մատչելիությունը և փոխանցումն ապահովվում են այնպիսի պայմաններով, որոնք հաշվի են առնում մտավոր սեփականության իրավունքների բավականաչափ և

արյունավետ պաշտպանությունը և համապատասխանում են դրան: Սույն կետը կիրառվում է ստորև շարադրված 3, 4 և 5 կետերին համապատասխան:

3. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ ձեռնարկում է պատշաճ օրենսդրական, վարչական կամ քաղաքական միջոցներ, որպեսզի Պայմանավորվող Կողմերին, հատկապես գենետիկական պաշարներ տրամադրող զարգացող երկրներ հանդիսացողներին, ապահովվի այդ պաշարների օգտագործումը ենթադրող տեխնոլոգիայի մատչելիությունը, և այդ տեխնոլոգիան փոխանցվի փոխադարձաբար համաձայնեցված պայմաններով, ներառյալ արտոնագրերով և մտավոր սեփականության այլ իրավունքներով պաշտպանված տեխնոլոգիան, և, անհրաժեշտության դեպքում, 20 և 21 հոդվածների դրույթների հիման վրա և միջազգային իրավունքի նորմերին, ինչպես նաև ստորև բերված 4 և 5 կետերին համապատասխան:

4. Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ ձեռնարկում է պատշաճ օրենսդրական, վարչական կամ քաղաքական միջոցներ, որպեսզի մասնավոր հատվածը նպաստի վերևում բերված 1 կետում նշված տեխնոլոգիաների մատչելիությանը, այդ տեխնոլոգիաների համատեղ մշակմանը և փոխանցմանը, ելնելով զարգացող երկրների ինչպես կառավարական հաստատությունների, այնպես էլ մասնավոր հատվածի շահերից, և այդ առնչությամբ կատարում է վերևում բերված 1, 2 և 3 կետերում շարադրված պարտավորությունները:

5. Պայմանավորվող Կողմերը, ընդունելով, որ արտոնագրերը և մտավոր սեփականության այլ իրավունքները կարող են ազդեցություն գործել սույն Կոնվենցիայի իրականացման վրա, համագործակցում են այդ ոլորտում, ղեկավարվելով ազգային օրենսդրությամբ և միջազգային իրավունքի նորմերով, որպեսզի այդ իրավունքները նպաստեն, այլ ոչ թե հակասեն սույն Կոնվենցիայի նպատակներին:

Հոդված 17

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

1. Պայմանավորվող Կողմերն օժանդակում են բոլոր հանրամատչելի աղբյուրներից կենսաբանական բազմազանության պահպանմանը և կայուն օգտագործմանը վերաբերող տեղեկատվության փոխանակմանը՝ հաշվի առնելով զարգացող երկրների հատուկ կարիքները:

2. Տեղեկատվության այդպիսի փոխանակումը ներառում է տեխնիկական, գիտական և սոցիալ-տնտեսական հետազոտությունների արդյունքների, ինչպես նաև մասնագիտական նախապատրաստման և հետազոտումների ծրագրերի, հատուկ գիտելիքների, որպես այդպիսին, տեղական և ավանդական գիտելիքների փոխանակում՝ հոդված 16-ի 1 կետում հիշատակված տեխնոլոգիաների զուգակցմամբ: Բացի այդ, երբ դա հնարավոր է, այն ներառում է տեղեկատվության հայրենադարձումը:

Հոդված 18

ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

1. Պայմանավորվող Կողմերը նպաստում են կենսաբանական բազմազանության պահպանման և կայուն օգտագործման բնագավառում միջազգային գիտատեխնիկական համագործակցությանը, անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան միջազգային և ազգային հաստատությունների միջոցով:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ նպաստում է մյուս Պայմանավորվող Կողմերի, հատկապես զարգացող երկրների հետ գիտատեխնիկական համագործակցությանը՝ սույն Կոնվենցիայի իրականացման գործում, մասնավորապես, ազգային քաղաքականության

մշակման և իրականացման միջոցով: Այդպիսի համագործակցությանն օժանդակելիս պետք է հատուկ ուշադրություն հատկացնել ազգային հնարավորությունների ընդլայնմանը՝ մարդկային ռեսուրսների զարգացման և համապատասխան հաստատությունների ստեղծման միջոցով:

3. Կողմերի Կոնֆերանսն իր առաջին խորհրդակցության ժամանակ որոշում է միջնորդական մեխանիզմի ստեղծման ուղիները՝ գիտատեխնիկական համագործակցության խրախուսման և թեթևացման նպատակով:

4. Ազգային օրենսդրությանը և քաղաքականությանը համապատասխան, Պայմանավորվող Կողմերը խրախուսում և մշակում են տեխնոլոգիաների ստեղծման և օգտագործման բնագավառում համագործակցության ձևերը, ներառյալ տեղական և ավանդական տեխնոլոգիաները՝ սույն Կոնվենցիայի նպատակներին համապատասխան: Այդ նպատակով Պայմանավորվող Կողմերը նաև խրախուսում են համագործակցությունը կադրերի պատրաստման և մասնագետների փոխանակման բնագավառում:

5. Պայմանավորվող Կողմերը փոխադարձ համաձայնությամբ օժանդակում են համատեղ գիտահետազոտական ծրագրերի և համատեղ ձեռնարկությունների ստեղծմանը՝ սույն Կոնվենցիայի նպատակներին վերաբերող տեխնոլոգիաների զարգացման համար:

Հոդված 19

ԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԿԻՐԱՌՈՒՄ ԵՎ ԴՐԱ ՅԵՏ ԿԱՊՎԱԾ ՕԳՈՒՏՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ ձեռնարկում է պատշաճ օրենսդրական, վարչական կամ քաղաքական միջոցներ՝ այն Պայմանավորվող Կողմերի, հատկապես զարգացող երկրների, կենսատեխնոլո-

գիական հետազոտությունների անցկացման հետ կապված գործունեության մեջ արդյունավետ մասնակցությունն ապահովելու համար, որոնք տրամադրում են գենետիկական պաշարներ այդպիսի հետազոտությունների համար, և, երբ դա հնարավոր է, այդպիսի Պայմանավորվող Կողմերի տարածքում:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ ձեռնարկում է բոլոր հնարավոր միջոցները Պայմանավորվող կողմերի, հատկապես զարգացող երկրների համար արդար և հավասար հիմունքներով այդ Պայմանավորվող Կողմերի տրամադրած գենետիկական պաշարների վրա հիմնված կենսատեխնոլոգիաներից բխող արդյունքների և օգուտների առաջնահերթ մատչելիության ապահովմանը նպաստելու և աջակցելու համար: Այդպիսի մատչելիություն իրականացվում է փոխադարձաբար համաձայնեցված պայմաններով:

3. Կողմերը քննարկում են միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը և պայմանները, հնարավոր է, արձանագրության ձևով, ներառելով, մասնավորապես, կենսաբանական բազմազանության պահպանման և կայուն օգտագործման վրա անբարենպաստ ազդեցություն գործելու հնարավորություն ունեցող, կենսատեխնոլոգիայի արդյունք հանդիսացող ցանկացած փոփոխված կենդանի օրգանիզմների անվտանգ փոխանցման, օգտագործման և կիրառման ոլորտում համապատասխան ընթացակարգերի մշակման նախնական հիմնավորված համաձայնությունը:

4. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ ուղղակիորեն տրամադրում է կամ իր իրավագործության ներքո գտնվող և կետ 3-ում նշված օրգանիզմներ տրամադրող ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձից պահանջում է այդպիսի օրգանիզմների հետ աշխատանքի ժամանակ՝ այդ Պայմանավորվող Կողմով որոշվող օգտագործման կանոնների և անվտանգության տեխնիկայի մասին ունեցած ցանկացած տեղեկատվություն, ինչպես նաև համապատասխան կոնկրետ օրգանիզմների հնարավոր վնասակար ազդեցության մասին գոյություն ունեցող ցանկացած տեղեկատվության փոխանցում այն Պայմանավորվող Կողմին, որը ներմուծում է այդ օրգանիզմները:

Հոդված 20

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ պարտավորվում է ապահովել, իր հնարավորությունների չափով, ֆինանսական օժանդակություն և խթաններ ազգային մակարդակով գործունեության այն տեսակների նկատմամբ, որոնք ուղղված են սույն Կոնվենցիայի նպատակների իրականացմանը՝ իրենց ազգային պլաններին, գերակայություններին և ծրագրերին համապատասխան:

2. Զարգացած երկրներ հանդիսացող Կողմերը տրամադրում են նոր և լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ, որպեսզի զարգացվող երկրներ հանդիսացող Կողմերին հնարավորություն տրվի փակել համաձայնեցված լրիվ լրացուցիչ ծախսերը, որոնք նրանք պետք է կրեն սույն Կոնվենցիայից բխող պարտավորությունների իրականացման ընթացքում, և ստանալ օգուտներ սույն Կոնվենցիայի դրույթների իրականացումից: Այդպիսի ծախսերը համաձայնեցվում են զարգացող երկիր հանդիսացող Կողմի և հոդված 21-ում նշված կազմակերպչական կառույցի միջև՝ միջոցներին, ռազմավարություններին, ծրագրային գերակայություններին և մատչելիության չափանիշներին, ինչպես նաև Կողմերի Կոնֆերանսի կողմից սահմանվող լրացուցիչ ծախսերի մոտավոր ցանկին համապատասխան: Մյուս Կողմերը, ներառյալ՝ շուկայական տնտեսության անցման փուլում ընթացքում գտնվող երկրները, կարող են կամավոր ստանձնել զարգացած երկրներ հանդիսացող Կողմերի պարտավորությունները: Սույն հոդվածի նպատակների համար Կողմերի Կոնֆերանսն իր առաջին խորհրդակցության ժամանակ սահմանում է զարգացած երկրներ հանդիսացող Կողմերի և զարգացած երկրներ հանդիսացող Կողմերի պարտավորությունները կամավոր ստանձնող մյուս Կողմերի ցանկը: Կողմերի Կոնֆերանսը պարբերաբար ամփոփում է ցանկը, և, անհրաժեշտության դեպքում, դրանում փոփոխություններ է կատարում: Կիրախուսվեն նաև այլ երկրների կողմից և այլ աղբյուրներից կամավոր հիմունքներով անդամավճարները: Այդ պարտավորությունները կատա-

րելիս անհրաժեշտ է հաշվի առնել միջոցների համապատասխանության, կանխատեսելիության և ճիշտ ժամանակին հատկացնելու անհրաժեշտությունը և ցանկում ընդգրկված ու ֆինանսավորմանը մասնակցող Կողմերի ծախսերի համահավասար բաշխման կարևորությունը:

3. Ջարգացած երկրներ հանդիսացող Կողմերը՝ սույն Կոնվենցիայի իրականացման կապակցությամբ կարող են նաև տրամադրել, իսկ զարգացող երկրներ հանդիսացող Կողմերը՝ օգտվել ֆինանսական ռեսուրսներից՝ երկկողմ, տարածաշրջանային և բազմակողմ ուղիներով:

4. Ջարգացող երկրներ հանդիսացող Կողմերի, Կոնվենցիայից բխող իրենց պարտավորություններն արդյունավետ կատարելու, կարողությունները կախված կլինեն զարգացած երկրներ հանդիսացող Կողմերի կողմից Կոնվենցիայից բխող ֆինանսական ռեսուրսների և տեխնոլոգիաների փոխանցման հետ կապված իրենց պարտավորությունների արդյունավետ կատարումից և ամբողջությամբ պայմանավորվելու են այն փաստով, որ զարգացող երկրներ հանդիսացող Կողմերի կարևորագույն գերակայություններն են սոցիալ-տնտեսական զարգացումը և աղքատության վերացումը:

5. Ֆինանսավորման և տեխնոլոգիաների փոխանցման հետ կապված իրենց գործողություններում Կողմերը լիարժեք կերպով հաշվի են առնում առավել թույլ զարգացած երկրների որոշակի կարիքները և հատուկ դրությունը:

6. Պայմանավորվող Կողմերը նկատի են առնում նաև այն հատուկ պայմանները, որոնք արդյունք են Կողմեր հանդիսացող զարգացող երկրներում, հատկապես փոքր կղզի-պետություններում, կենսաբանական բազմազանության բաշխումից և գտնվելու տեղից կախվածության:

7. Պետք է նկատի առնել նաև զարգացող երկրների հատուկ դրությունը՝ ներառյալ այն զարգացող երկրները, որոնք առավել խոցելի են էկոլոգիական տեսակետից, այդ թվում՝ չորային և կիսաչորային գոտիներ, առափնյա և լեռնային շրջաններ ունեցող երկրները:

Հոդված 21

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

1. Սույն Կոնվենցիայի նպատակների համար զարգացող երկրներ հանդիսացող Կողմերին անհատույց կամ արտոնյալ հիմունքներով ֆինանսական միջոցներ տրամադրելու համար ստեղծվում է համապատասխան մեխանիզմ, որի հիմնական տարրերը շարադրված են սույն հոդվածում: Սույն Կոնվենցիայի նպատակների համար այդ մեխանիզմը գործում է Կողմերի Կոնֆերանսի ղեկավարության ներքո, հաշվի առնելով նրա առաջարկները և հաշվետու է նրա առջև: Մեխանիզմի գործունեությունն իրականացվում է այն կազմակերպչական կառույցի օգնությամբ, որը Կողմերի Կոնֆերանսը կարող է որոշել իր առաջին խորհրդակցության ժամանակ: Սույն Կոնվենցիայի նպատակների համար Կողմերի Կոնֆերանսը որոշում է այդ ռեսուրսների մատչելիությունը և դրանց օգտագործումը կարգավորող միջոցները, ռազմավարությունը, ծրագրային գերակայությունները և չափանիշները: Վճարները կատարվում են, հաշվի առնելով հոդված 20-ում նշված ֆինանսական միջոցների կանխատեսելի, համարժեք և ժամանակին ներհուսքն ապահովելու անհրաժեշտությունը՝ ռեսուրսների կարիքին համապատասխան, որոնց չափը պարբերաբար որոշվում է Կողմերի Կոնֆերանսի կողմից, ինչպես նաև հոդված 20-ի 2-րդ կետում նշված՝ ֆինանսավորմանը մասնակցող Կողմերի ծախսերի հավասար բաշխման կարևորությունը: Կամավոր վճարումներ կարող են կատարվել նաև զարգացող երկրներ հանդիսացող Կողմերից, ինչպես նաև այլ երկրներից և աղբյուրներից: Մեխանիզմը գործում է կառավարման ժողովրդավարական և բաց համակարգի հիման վրա:

2. Սույն Կոնվենցիայի նպատակներին համապատասխան՝ Կողմերի Կոնֆերանսն իր առաջին խորհրդակցության ժամանակ որոշում է ֆինանսական ռեսուրսների մատչելիությունը և դրանց օգտագործումը, ներառյալ այդպիսի օգտագործման հիման վրա իրականացվող վերահսկողությունը և դրա գնահատումը, կարգավորող միջոցները, ռազ-

մավարությունը և ծրագրային գերակայությունները, ինչպես նաև մանրամասն չափանիշները և ղեկավար սկզբունքները: Համապատասխան կազմակերպչական կառույցի հետ խորհրդակցելուց հետո, որին հանձնարարված է ֆինանսավորման մեխանիզմի գործունեության կառավարումը, Կողմերի Կոնֆերանսն ընդունում է որոշումներ, որոնք վերաբերվում են վերևում բերված 1-ին կետի դրույթների կատարման համար անհրաժեշտ միջոցներին:

3. Կողմերի Կոնֆերանսն իրականացնում է սույն հոդվածին համապատասխան ստեղծված ֆինանսավորման մեխանիզմի արդյունավետության ամփոփում, ներառյալ չափանիշները և ղեկավար սկզբունքները, որոնց մասին նշված է վերևում բերված 2-րդ կետում՝ սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո երկու տարին լրանալուց ոչ շուտ, այնուհետև՝ կանոնավոր հիմունքներով: Հաշվի առնելով այդ ամփոփման արդյունքները, Կողմերի Կոնֆերանսը, անհրաժեշտության դեպքում, ձեռնարկում է մեխանիզմի գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված համապատասխան միջոցներ:

4. Պայմանավորվող Կողմերը քննարկում են գոյություն ունեցող ֆինանսական հաստատությունների ամրապնդման խնդիրը՝ կենսաբանական բազմազանության պահպանման և կայուն օգտագործման համար ֆինանսական ռեսուրսներ տրամադրելու նպատակով:

Հոդված 22

ԿԱՊԸ ԱՅԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՆԵՐԻ ՀԵՏ

1. Սույն Կոնվենցիայի դրույթները չեն շոշափում ցանկացած գործող միջազգային համաձայնագրից բխող ցանկացած Պայմանավորվող Կողմի իրավունքները և պարտավորությունները, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ իրավունքների և պարտավորությունների իրականացման արդյունքը լուրջ վնաս կամ սպառնալիք է հանդիսանում կենսաբանական բազմազանությանը:

2. Ծովային միջավայրին վերաբերող մասով Պայմանավորվող Կողմերն իրականացնում են սույն Կոնվենցիայի դրույթները՝ հակասության մեջ չմտնելով ծովային իրավունքով նախատեսված պետությունների իրավունքների և պարտավորությունների հետ:

Հոդված 23

ԿՈՂՄԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ

1. Սույնով հիմնադրվում է Կողմերի կոնֆերանսը: Կողմերի Կոնֆերանսի առաջին խորհրդակցությունը գումարվում է Միավորված Ազգերի Կազմակերպության Շրջակա միջավայրի գործադիր տնօրենի կողմից՝ ոչ ուշ, քան սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու պահից մեկ տարի հետո: Հետագայում Կողմերի Կոնֆերանսի հերթական խորհրդակցությունները գումարվում են Կողմերի Կոնֆերանսի կողմից, իր առաջին խորհրդակցության ժամանակ, սահմանված պարբերությամբ:

2. Կողմերի Կոնֆերանսի արտահերթ խորհրդակցությունները գումարվում են այն ժամանակ, երբ Կոնֆերանսը կարող է դա անհրաժեշտ համարել, կամ Կողմերից որևէ մեկի գրավոր դիմումի համաձայն, այն պայմանով, որ քարտուղարության կողմից դիմումն իրենց ուղարկելու պահից վեց ամսվա ընթացքում դրան կողմ հանդես գա Կողմերի առնվազն մեկ երրորդը:

3. Կողմերի Կոնֆերանսը փոխհամաձայնությամբ համաձայնեցնում և ընդունում է իր ընթացակարգի կանոնները և ցանկացած այնպիսի օժանդակ մարմինների ընթացակարգի կանոնները, որոնք կարող է հիմնադրել Կոնֆերանսը, ինչպես նաև քարտուղարության ֆինանսավորումը կարգավորող ֆինանսական կանոնները: Յուրաքանչյուր հերթական խորհրդակցությունում Կոնֆերանսը հաստատում է մինչև հաջորդ խորհրդակցություն ֆինանսական ժամանակահատվածի բյուջեն:

4. Կողմերի Կոնֆերանսը մշտապես հետևում է սույն Կոնվենցիայի դրույթների կատարմանը, և այդ նպատակով.

ա) որոշում է հողված 26-ին համապատասխան տեղեկատվության տրամադրման ձևը և պարբերականությունը, քննարկում է այդ տեղեկատվությունը, ինչպես նաև ցանկացած օժանդակ մարմնի կողմից ներկայացվող զեկուլյցները;

բ) քննարկում է հողված 25-ին համապատասխան ներկայացվող կենսաբանական բազմազանության վերաբերյալ գիտական, տեխնիկական և տեխնոլոգիական առաջարկությունները;

գ) հողված 28-ին համապատասխան՝ քննարկում և անհրաժեշտության դեպքում ընդունում է արձանագրություններ;

դ) հողվածներ 29 և 30-ին համապատասխան՝ քննարկում է սույն Կոնվենցիային և հավելվածների առաջարկվող ուղղումները և, անհրաժեշտության դեպքում, ընդունում դրանք;

ե) քննարկում է ցանկացած արձանագրությունում, ինչպես նաև դրա ցանկացած հավելվածում առաջարկվող ուղղումները և, համապատասխան որոշման առկայության դեպքում, տվյալ արձանագրության կողմերին առաջարկում է ընդունել դրանք;

զ) հողված 30-ին համապատասխան՝ քննարկում և, անհրաժեշտության դեպքում, ընդունում է սույն Կոնվենցիայի լրացուցիչ հավելվածներ;

է) հիմնադրում է այնպիսի օժանդակ մարմիններ, մասնավորապես, գիտական և տեխնիկական հարցերի շուրջ խորհրդատվությունների համար, որոնք անհրաժեշտ են համարվում սույն Կոնվենցիայի իրականացման համար;

ը) քարտուղարության միջոցով շփումներ է հաստատում սույն Կոնվենցիայի շրջանակներում ընդգրկված հարցերը շոշափող այլ կոնվենցիա-

ների գործադիր մարմինների հետ՝ համագործակցության համապատասխան ձևաչափեր նշակելու նպատակով; և

թ) քննարկում և ընդունում է այնպիսի լրացուցիչ միջոցներ, որոնք կարող են պահանջվել սույն Կոնվենցիայի նպատակներին հասնելու համար՝ հաշվի առնելով Կոնվենցիայի իրականացման ընթացքում կուտակված փորձը:

5. Միավորված Ազգերի Կազմակերպությունը, նրա մասնագիտացված հաստատությունները և Ատոմային էներգիայի միջազգային գործակալությունը, ինչպես նաև սույն Կոնվենցիայի Կողմ չհանդիսացող ցանկացած պետություն կարող են Կողմերի Կոնֆերանսի խորհրդակցությանը ներկայացված լինել դիտորդի կարգավիճակով: Ցանկացած այլ մարմիններ կամ հաստատություններ, կառավարական կամ ոչ կառավարական, որոնք փորձ ունեն կենսաբանական բազմազանության պահպանմանը և կայուն օգտագործմանն առնչվող ոլորտներում, և որոնք քարտուղարությանը տեղեկացրել են դիտորդի կարգավիճակով Կողմերի Կոնֆերանսի խորհրդակցությանը ներկայացված լինելու իրենց ցանկության մասին, կարող են թույլատրվել մասնակցել դրան, եթե դրան չի առարկում խորհրդակցությանը ներկա Կողմերի առնվազն մեկ երրորդը: Դիտորդների մուտքը և մասնակցությունը կարգավորվում են Կողմերի Կոնֆերանսի կողմից ընդունված ընթացակարգի կանոններով:

Հոդված 24

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ

1. Սույնով հիմնադրվում է քարտուղարություն: Նրա վրա դրվում են հետևյալ գործառույթները.

ա) հոդված 23-ին համապատասխան անցկացվող Կողմերի Կոնֆերանսի խորհրդակցությունների կազմակերպումը և սպասարկումը;

բ) ցանկացած արձանագրությամբ իր համար սահմանված գործառույթների կատարումը;

գ) Սույն Կոնվենցիային համապատասխան՝ իր գործառույթների մասին զեկույցների նախապատրաստումը և դրանց ներկայացումը Կողմերի Կոնֆերանսին;

դ) այլ համապատասխան միջազգային մարմինների հետ գործունեության համակարգումը և, մասնավորապես, այնպիսի վարչական և պայմանագրային համաձայնությունների ձեռքբերումը, որոնք կարող են պահանջվել իր գործառույթների արդյունավետ կատարման համար; և

ե) այնպիսի այլ գործառույթների կատարումը, որոնք կարող են որոշվել Կողմերի Կոնֆերանսի կողմից:

2. Իր առաջին հերթական խորհրդակցության ժամանակ Կողմերի Կոնֆերանսը նշանակում է քարտուղարություն՝ զոյություն ունեցող այն հեղինակավոր միջազգային կազմակերպությունների թվից, որոնք իրենց պատրաստակամությունն են հայտնել կատարել քարտուղարական գործառույթները՝ սույն Կոնվենցիային համապատասխան:

Հոդված 25

ԳԻՏԱԿԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԺԱՆԴԱԿ ՄԱՐՄԻՆ

1. Սույնով հիմնադրվում է գիտական, տեխնիկական և տեխնոլոգիական խորհրդատվություններ տրամադրող օժանդակ մարմին՝ Կողմերի Կոնֆերանսին, և, անհրաժեշտության դեպքում, նրա այլ օժանդակ մարմիններին սույն Կոնվենցիայի իրականացման վերաբերյալ ժամանակին խորհրդատվությունների տրամադրումը ապահովելու նպատակով: Այս մարմինը բաց է բոլոր Կողմերի մասնակցության համար և ունի բազմաճյուղ բնույթ: Նրանում ընդգրկվում են կառավարությունների

ներկայացուցիչներ, որոնք մասնագիտացված են գիտելիքների համապատասխան ճյուղերի գծով: Այն պարբերաբար զեկույցներ է ներկայացնում Կողմերի Կոնֆերանսին իր աշխատանքի բոլոր ուղղությունների վերաբերյալ:

2. Կողմերի Կոնֆերանսի ղեկավարությամբ և նրա կողմից շարադրված ղեկավար սկզբունքներին համապատասխան և նրա խնդրանքով այդ մարմինը.

ա) տալիս է կենսաբանական բազմազանության վիճակի գիտական և տեխնիկական գնահատականները;

բ) պատրաստում է սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան ձեռնարկված միջոցների տեսակների հետևանքների գիտական և տեխնիկական գնահատականները;

գ) բացահայտում է նոր, արդյունավետ և առավել արդիական տեխնոլոգիաներ և «նոու-հաու»՝ կենսաբանական բազմազանության պահպանման և կայուն օգտագործման ոլորտում և առաջարկություններ է ներկայացնում այդպիսի տեխնոլոգիաների մշակմանը և/կամ փոխանցմանն աջակցելու ուղիների և միջոցների վերաբերյալ;

դ) խորհրդատվություններ է տալիս կենսաբանական բազմազանության պահպանման և կայուն օգտագործման հետ կապված հետազոտությունների և մշակումների ոլորտում գիտական ծրագրերի և միջազգային համագործակցության վերաբերյալ; և

ե) պատասխաններ է տալիս գիտական, տեխնիկական, տեխնոլոգիական և մեթոդաբանական բնույթի հարցերին, որոնք կարող են ուղղվել Կողմերի կոնֆերանսին և նրա օժանդակ մարմիններին:

3. Մարմնի գործառույթները, գործունեության շրջանակը, կազմակերպումը և գործելակերպը կարող են ճշգրտվել Կողմերի Կոնֆերանսի կողմից:

Հոդված 26

ՁԵԿՈՒՅՑՆԵՐ

Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ Կողմերի Կոնֆերանսի սահմանած պարբերականությամբ Կողմերի Կոնֆերանսին է ներկայացնում զեկույցներ՝ սույն Կոնվենցիայի դրույթների իրագործման համար իր կողմից ձեռնարկված միջոցների և սույն Կոնվենցիայի նպատակների իրականացման տեսանկյունից այդ միջոցների արդյունավետության վերաբերյալ:

Հոդված 27

ՎԵՃԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

1. Սույն Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ Պայմանավորվող կողմերի միջև ծագած վեճի դեպքում շահագրգիռ կողմերը ձգտում են բանակցությունների միջոցով կարգավորել վեճը:

2. Եթե շահագրգիռ կողմերը չեն կարող համաձայնության գալ բանակցությունների միջոցով, նրանք կարող են համատեղ ապավինել երրորդ կողմի բարի ծառայություններին կամ նրան դիմել միջնորդության խնդրանքով:

3. Սույն Կոնվենցիայի վավերացման, ընդունման, հավանություն տալու կամ միանալու դեպքում, կամ դրանից հետո ցանկացած ժամանակ, պետությունը կամ տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպությունը կարող է Ավանդապահին գրավոր դիմում ուղղել այն մասին, որ սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ կետին համապատասխան, չկարգավորված վեճի առնչությամբ նրանք պարտադիր են ճանաչում վեճի կարգավորման ստորև բերված միջոցներից մեկը կամ երկուսը:

ա) արբիտրաժային դատաքննություն հավելված 2-ի 1-ին մասում շարադրված ընթացակարգին համապատասխան;

բ) վեճի հանձնում Միջազգային դատարան:

4. Եթե վեճի կողմերը, վերևում բերված 3-րդ կետին համապատասխան, չեն ընդունում միևնույն ընթացակարգը կամ ընթացակարգերից որևէ մեկը, ապա վեճը քննարկվում է համաձայնեցման ընթացակարգի հիման վրա՝ հավելված 2-ի 2-րդ մասին համապատասխան, եթե կողմերն այլ կերպ չեն պայմանավորվել:

5. Սույն հոդվածի դրույթները կիրառվում են ցանկացած արձանագրության նկատմամբ, եթե այդ արձանագրությամբ այլ բան նախատեսված չէ:

Հոդված 28

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ

1. Պայմանավորվող Կողմերը համագործակցում են սույն Կոնվենցիայի արձանագրությունների մշակման և ընդունման գործում:

2. Արձանագրություններն ընդունվում են Կողմերի Կոնֆերանսի խորհրդակցության ժամանակ:

3. Ցանկացած առաջարկվող արձանագրության տեքստը քարտուղարությունն ուղարկում է Պայմանավորվող Կողմերին՝ խորհրդակցությունից առնվազն վեց ամիս առաջ:

Հոդված 29

**ՈՒՂՂՈՒՄՆԵՐ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԿԱՄ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

1. Ցանկացած Պայմանավորվող Կողմ կարող է առաջարկել ուղղումներ սույն Կոնվենցիայում: Արձանագրության ցանկացած Կողմ կարող է առաջարկել ուղղումներ այդ արձանագրությանը:

2. Սույն Կոնվենցիայում ուղղումներն ընդունվում են Կողմերի Կոնֆերանսի խորհրդակցությունում: Ցանկացած արձանագրության մեջ ուղղումներն ընդունվում են համապատասխան արձանագրության Կողմերի խորհրդակցությունում: Քարտուղարությունը սույն Կոնվենցիայում կամ ցանկացած արձանագրության մեջ ցանկացած առաջարկվող ուղղման տեքստը, եթե այդ արձանագրությամբ այլ բան նախատեսված չէ, քննարկվող փաստաթղթի Կողմերին է ուղարկում խորհրդակցությունից, որում առաջարկվում է ընդունել այն առնվազն վեց ամիս առաջ: Քարտուղարությունը առաջարկվող ուղղումների տեքստը փոխանցում է նաև սույն Կոնվենցիան ստորագրած կողմերին՝ ի գիտություն:

3. Կողմերը գործադրում են բոլոր ջանքերը, որպեսզի Կոնվենցիայում կամ արձանագրության մեջ ցանկացած առաջարկվող ուղղում ընդունվի փոխադարձ համաձայնությամբ: Եթե փոխադարձ համաձայնության ձեռքբերման համար բոլոր հնարավորությունները սպառվել են, իսկ համաձայնություն ձեռք չի բերվել, ապա, որպես վերջին միջոց, քննարկվող փաստաթղթի ուղղումն ընդունվում է խորհրդակցությանը ներկա և քվեարկությանը մասնակցող Կողմերի ձայների երկու երրորդի մեծամասնությամբ և Ավանդապահի կողմից ուղարկվում է բոլոր Կողմերին՝ վավերացնելու, ընդունելու կամ հավանություն տալու համար:

4. Ավանդապահը գրավոր ձևով ծանուցվում է ուղղումների վավերացման, ընդունման կամ հավանություն տալու մասին: Վերևում բերված 3-

րդ կետին համապատասխան ընդունվող ուղղումները դրանց համաձայնություն տված Կողմերի համար ուժի մեջ են մտնում սույն Կոնվենցիայի կամ համապատասխան արձանագրության Կողմերի առնվազն երկու երրորդի կողմից վավերացնելու, ընդունելու կամ հավանություն տալու մասին փաստաթղթերն ի պահ հանձնելու պահից իննսուներորդ օրը, եթե տվյալ արձանագրությամբ այլ բան նախատեսված չէ: Դրանից հետո ցանկացած այլ Կողմի համար ուղղումներն ուժի մեջ են մտնում այդ Կողմից նշված ուղղումները վավերացնելու, ընդունելու կամ հավանություն տալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու պահից իննսուներորդ օրը:

5. Սույն հոդվածի նպատակների համար «ներկա և քվեարկությամբ մասնակցող Կողմեր» սահմանումը նշանակում է՝ ներկա և «կողմ» կամ «դեմ» քվեարկող Կողմեր:

Հոդված 30

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑՈՒՄ ՈՒՂՂՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

1. Սույն Կոնվենցիայի կամ ցանկացած արձանագրության հավելվածները Կոնվենցիայի կամ այդպիսի արձանագրության անբաժանելի մասն են հանդիսանում և, եթե ուղղակիորեն այլ բան նախատեսված չէ, ապա սույն Կոնվենցիային կամ արձանագրությամբ կատարվող ցանկացած հղում միաժամանակ իրենից ներկայացնում է հղում դրանց ցանկացած հավելվածին: Այդպիսի հավելվածները սահմանափակվում են ընթացակարգային, գիտական, տեխնիկական և վարչական հարցերով:

2. Եթե որևէ արձանագրությամբ դրա հավելվածների նկատմամբ այլ բան նախատեսված չէ, ապա սույն Կոնվենցիայի կամ ցանկացած արձանագրության լրացուցիչ հավելվածների առաջարկման, ընդունման և ուժի մեջ մտնելու համար կիրառվում են հետևյալ ընթացակարգերը:

ա) սույն Կոնվենցիայի կամ ցանկացած արձանագրության հավելվածներն առաջարկվում և ընդունվում են հոդված 29-ում շարադրված ընթացակարգին համապատասխան;

բ) ցանկացած Կողմ, որը չի կարող ընդունել սույն Կոնվենցիայի կամ ցանկացած արձանագրության, որի Կողմ է հանդիսանում, լրացուցիչ հավելվածը, այդ մասին գրավոր ձևով ծանուցում է Ավանդապահին՝ վերջինիս կողմից այդ հավելվածն ընդունելու մասին տեղեկացվելու օրվանից մեկ տարվա ընթացքում: Ավանդապահն անհապաղ տեղեկացնում է բոլոր Կողմերին ցանկացած այդպիսի ծանուցում ստանալու մասին: Ցանկացած Կողմ կարող է ցանկացած ժամանակ հետ վերցնել առարկելու մասին իր հայտարարությունը, ինչից հետո հավելվածը, ստորև բերված գ) ենթակետի դրույթները պահպանելով, ուժի մեջ է մտնում տվյալ Կողմի համար:

գ) Ավանդապահի՝ ընդունման մասին հայտնելու օրվանից մեկ տարին լրանալուն պես հավելվածն ուժի մեջ է մտնում սույն Կոնվենցիայի կամ համապատասխան արձանագրության բոլոր Կողմերի համար, որոնք, վերևում բերված բ) ենթակետի դրույթին համապատասխան, ծանուցում չեն ներկայացրել:

3. Սույն Կոնվենցիայի կամ ցանկացած արձանագրության հավելվածներում ուղղումների առաջարկումը, ընդունումը և ուժի մեջ մտնելը կարգավորվում է նույն ընթացակարգով, որը սահմանված է Կոնվենցիայի կամ ցանկացած արձանագրության հավելվածների առաջարկման, ընդունման և ուժի մեջ մտնելու համար:

4. Եթե լրացուցիչ հավելվածը կամ հավելվածի ուղղումը կապված է սույն Կոնվենցիայում կամ ցանկացած արձանագրության մեջ փոփոխություն կատարելու հետ, ապա այդպիսի լրացուցիչ հավելվածը կամ ուղղումն ուժի մեջ է մտնում մինիայն Կոնվենցիայում կամ համապատասխան արձանագրության մեջ կատարված ուղղման ուժի մեջ մտնելուց հետո:

Հոդված 31

ՁԱՅՆԻ ԻՐԱՎՈՒՆՔ

1. Բացառությամբ ստորև բերված 2-րդ կետում նախատեսված դեպքի, սույն Կոնվենցիայի կամ ցանկացած արձանագրության յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ ունի մեկ ձայն:

2. Տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպություններն իրենց իրավասությունների շրջանակում գտնվող հարցերում իրականացնում են իրենց ձայնի իրավունքը Կոնվենցիայի կամ համապատասխան արձանագրության Պայմանավորվող Կողմ հանդիսացող իրենց անդամ պետությունների թվին հավասար ձայներով: Այդպիսի կազմակերպությունները չեն օգտվում իրենց ձայնի իրավունքից, եթե այդ իրավունքից օգտվում են իրենց անդամ պետությունները, և հակառակը:

Հոդված 32

ԿԱՊԸ ՍՈՒՅՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԵՎ ԴՐԱ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

1. Պետությունը կամ Տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպությունը կարող է որևէ արձանագրության Կողմ դառնալ միայն այն դեպքում, երբ նա հանդիսանում է կամ միաժամանակ դառնում է սույն Կոնվենցիայի Պայմանավորվող Կողմ:

2. Ցանկացած արձանագրության համապատասխան որոշումները ընդունում են միայն այդ արձանագրության Կողմերը: Ցանկացած Պայմանավորվող Կողմ, որը չի վավերացրել, չի ընդունել կամ էլ հավանություն չի տվել արձանագրությանը, կարող է դիտորդի կարգավիճակով մասնակցել այդ արձանագրության Կողմերի ցանկացած խորհրդակցությանը:

Հոդված 33

ՍՏՈՐԱԳՐՈՒՄ

Սույն Կոնվենցիան բաց է ստորագրման համար բոլոր պետությունների և տնտեսական ինտեգրման ցանկացած տարածաշրջանային կազմակերպության համար Ռիո դե Ժանեյրոյում՝ 1992 թվականի հունիսի 5-ից մինչև 1992 թվականի հունիսի 14-ը, ինչպես նաև Նյու Յորքում Միավորված Ազգերի Կազմակերպության կենտրոնական հիմնարկություններում՝ 1992 թվականի հունիսի 15-ից մինչև 1993 թվականի հունիսի 4-ը:

Հոդված 34

ՎԱԿԵՐԱՑՈՒՄ, ԸՆԴՈՒՆՈՒՄ, ԿԱՄ ՅԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սույն Կոնվենցիան և ցանկացած արձանագրություն ենթակա են վավերացման, ընդունման կամ հավանության պետությունների և տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպությունների կողմից: Վավերացնելու, ընդունելու կամ հավանություն տալու մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում Ավանդապահին:

2. Եթե վերևում բերված 1-ն կետում նշված ցանկացած կազմակերպություն, սույն Կոնվենցիայի կամ ցանկացած արձանագրության Պայմանավորվող Կողմ է դառնում, այն դեպքում, երբ այդ կազմակերպության անդամ պետություններից ոչ մեկը Պայմանավորվող Կողմ չի հանդիսանում, կապված է, Կոնվենցիայից կամ արձանագրությունից համապատասխան բխող, բոլոր պարտավորություններին: Այն դեպքում, երբ այդպիսի կազմակերպության մեկ կամ ավելի անդամ-պետություններ հանդիսանում են Կոնվենցիայի կամ համապատասխան արձանագրության Պայմանավորվող Կողմեր, այդ կազմակերպությունը և դրա անդամ-պետությունները որոշում են ընդունում, համապատասխանաբար, Կոնվենցիայից կամ արձանագրությունից բխող իրենց

պարտավորությունների կատարման հետ կապված համապատասխան պարտականությունների վերաբերյալ: Նման դեպքերում այդ կազմակերպությունը և դրա անդամ-պետությունները չեն կարող միաժամանակ իրականացնել Կոնվենցիայից կամ համապատասխան արձանագրությունից բխող իրավունքները:

3. Վավերացնելու, ընդունելու կամ հավանություն տալու մասին իրենց փաստաթղթերում, վերը բերված 1-ին կետում նշված, կազմակերպությունները հայտարարում են Կոնվենցիայով կամ համապատասխան արձանագրությամբ կարգավորվող հարցերի նկատմամբ իրենց իրավասությունների շրջանակի մասին: Այդ կազմակերպությունները Ավանդապահին անհապաղ տեղեկացնում են նաև իրենց իրավասությունների շրջանակի ցանկացած համապատասխան փոփոխության մասին:

Հոդված 35

ՄԻԱՆԱԼԸ

1. Սույն Կոնվենցիան և ցանկացած արձանագրություն բաց են պետությունների և տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպությունների միանալու համար այն օրվանից, երբ Կոնվենցիան կամ համապատասխան արձանագրությունը փակվում են ստորագրման համար: Միացման մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում Ավանդապահին:

2. Միանալու մասին իրենց փաստաթղթերում վերը շարադրված 1-ին կետում նշված կազմակերպությունները հայտարարում են սույն Կոնվենցիայով կամ համապատասխան արձանագրությամբ կարգավորվող հարցերի նկատմամբ իրենց իրավասությունների ոլորտի մասին: Այդ կազմակերպությունները Ավանդապահին տեղեկացնում են նաև իրենց իրավասությունների ոլորտի ցանկացած համապատասխան փոփոխության մասին:

3. Գողման 34-ի 2-րդ կետի դրույթները կիրառվում են տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպությունների նկատմամբ, որոնք միանում են սույն Կոնվենցիային կամ ցանկացած արձանագրությանը:

Հ ո դ վ ա ծ 36

ՈՒԺԻ ՄԵՁ ՄՏՆԵԼԸ

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում վավերացնելու, ընդունելու, հավանություն տալու կամ միանալու մասին երեսուներորդ փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվանից իննսուններորդ օրը:

2. Ցանկացած արձանագրություն ուժի մեջ է մտնում վավերացնելու, ընդունելու, հավանություն տալու կամ միանալու մասին տվյալ արձանագրությունում նշված քանակության փաստաթղթերն ի պահ հանձնելու օրվանից իննսուններորդ օրը:

3. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի համար, որը վավերացնում, ընդունում կամ հավանություն է տալիս սույն Կոնվենցիան, կամ միանում է դրան, վավերացնելու, ընդունելու, հավանություն տալու կամ միանալու մասին երեսուներորդ փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո, Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այդ Պայմանավորվող Կողմի վավերացնելու, ընդունելու, հավանություն տալու կամ միանալու մասին իր փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվանից իննսուններորդ օրը:

4. Ցանկացած արձանագրություն, եթե դրանով այլ բան նախատեսված չէ Պայմանավորվող կողմի համար, որը վավերացնում, ընդունում կամ հավանություն է տալիս այդ արձանագրությանը կամ միանում է դրան վերևում բերված 2-րդ կետի համաձայն, ուժի մեջ մտնելուց հետո, Պայմանավորվող կողմի վավերացնելու, ընդունելու, հավանություն տալու կամ միանալու մասին իր փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվանից իննսուններորդ օրը կամ այդ Պայմանավորվող Կողմի համար Կոնվենցիան:

ցիայի ուժի մեջ մտնելու օրը՝ կախված այն հանգամանքից, թե դրանցից որն է ավելի ուշ գալիս:

5. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի նպատակների համար տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպության կողմից ի պահ հանձնված ցանկացած փաստաթուղթ չի դիտարկվում որպես այդ կազմակերպության անդամ-պետությունների կողմից ի պահ հանձնված փաստաթղթերը լրացնող փաստաթուղթ:

Հոդված 37

ՎԵՐԱՊԱՅՈՒՄՆԵՐ

Սույն Կոնվենցիայի նկատմամբ ոչ մի վերապահում չի ընդունվում:

Հոդված 38

ԴՈՒՐՍ ԳԱԼԸ

1. Ցանկացած Պայմանավորվող Կողմի համար սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրվանից երկու տարին անցնելուն պես այդ Պայմանավորվող Կողմը կարող է դուրս գալ Կոնվենցիայից՝ գրավոր ծանուցում ուղարկելով Ավանդապահին:

2. Ցանկացած այդպիսի դուրս գալն ուժի մեջ է մտնում Ավանդապահի կողմից ծանուցումն ստանալու օրվանից մեկ տարին լրանալուն պես կամ այնպիսի ավելի ուշ ժամկետում, որը կարող է նշվել դուրս գալու մասին ծանուցման մեջ:

3. Ցանկացած Պայմանավորվող Կողմ, որը դուրս է եկել սույն Կոնվենցիայից, համարվում է դուրս եկած նաև ցանկացած արձանագրությունից, որի Կողմ նա հանդիսանում է:

Հոդված 39

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՐԳ

Միավորված Ազգերի Կազմակերպության Ձարգացման ծրագրի Գլոբալ շրջակա միջավայրի հիմնադրամը, հոդված 21-ի դրույթներին համապատասխան, դրա լիակատար վերակառուցման պայմանով, Միավորված Ազգերի Կազմակերպության Շրջակա միջավայրի ծրագիրը և Վերակառուցման ու զարգացման միջազգային բանկը ժամանակավոր հիմունքներով, սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու պահից մինչև Կողմերի Կոնֆերանսի առաջին խորհրդակցությունը կամ մինչև այն պահը, երբ Կողմերի Կոնֆերանսը հոդված 21-ին համապատասխան կսահմանի այդպիսի կազմակերպչական կառույց, հանդիսանում են հոդված 21-ով նախատեսված կազմակերպչական կառույց:

Հոդված 40

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Քարտուղարությունը, որի ստեղծումն ապահովում է Միավորված Ազգերի Կազմակերպության Շրջակա միջավայրի ծրագրի գործադիր տնօրենը, հանդիսանում է քարտուղարություն, որը նախատեսված է հոդված 24-ի 2-րդ կետում, ժամանակավոր հիմունքներով՝ սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու և Կողմերի Կոնֆերանսի առաջին խորհրդակցության միջև ընկած ժամանակաշրջանում:

Հոդված 41

ԱՎԱՆԴԱՊԱՅԸ

Սույն Կոնվենցիայի և ցանկացած արձանագրությունների Ավանդապահի գործառույթները կատարում է Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր քարտուղարը:

Հոդված 42

ԲՆԱԳՐԱՅԻՆ ՏԵՔՍՏԵՐ

Սույն Կոնվենցիայի բնօրինակը, որի անգլերեն, արաբերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն և ֆրանսերեն տեքստերը հավասարազոր բնագրային են, ի պահ է հանձնվում Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

Ի ՀԱՎԱՍՏՈՒՄՆ ՈՐԻ, պատշաճ կերպով լիազորված ներքոստորագրյալները ստորագրել են սույն Կոնվենցիան:

Կատարվել է Ռիո դե Ժանեյրոյում՝ հազար ինը հարյուր իննսուներկու թվականի հունիսի հինգին:

ՀԱՎԵԼՎԱԾ I

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ ԵՎ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

1. Էկոհամակարգեր և բնակության վայրեր. որոնք բնութագրվում են բազմազանության բարձր աստիճանով, էնդեմիկ կամ վտանգված տեսակների մեծ քանակով, կամ պարունակում են վայրի կենդանի բնություն: անհրաժեշտ են միգրացվող տեսակների համար. ունեն սոցիալական, տնտեսական, մշակութային կամ գիտական նշանակություն: կամ ունեն ներկայացուցչական կամ յուրահատուկ բնույթ, կամ կապված են էվոլյուցիոն կամ այլ կենսաբանական հիմնական գործընթացների հետ:

2. Տեսակներ և համակեցություններ. որոնք վտանգված են; ընտելացված կամ մշակվող տեսակների վայրի ազգակից տեսակներ են հանդիսանում; ունեն բժշկական, գյուղատնտեսական կամ այլ տնտեսական արժեք; կամ ունեն սոցիալական, գիտական կամ մշակութային նշանակություն; կամ կենսաբանական բազմազանության պահպանման և կայուն օգտագործման ոլորտում հետազոտությունների համար կարևոր դեր են կատարում, օրինակ՝ որպես ինդիկատոր տեսակներ, և

3. Նկարագրված զենոմներ և զեներ, որոնք ունեն սոցիալական, գիտական կամ տնտեսական նշանակություն:

ՀԱՎԵԼՎԱԾ II

Մաս 1

ԱՐՔԻՏՐԱԺԱՅԻՆ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Հոդված 1

Հայցվոր կողմը քարտուղարությանը ծանուցում է այն մասին, որ կողմերը, սույն Կոնվենցիայի հոդված 27-ին համապատասխան, վեճը հանձնում են արբիտրաժային դատաքննության: Ծանուցումը բովանդակում է արբիտրաժային դատաքննության առարկայի շարադրումը, և ներառում է, մասնավորապես, Կոնվենցիայի կամ արձանագրության հոդվածները, որոնց մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ ծագել է վեճը: Եթե կողմերը վեճի առարկայի մասին չեն պայմանավորվել դատարանի նախագահին նշանակելուց առաջ, ապա առարկան որոշվում է արբիտրաժային դատարանի կողմից: Քարտուղարությունը այդ կերպ փոխանցում է ստացված տեղեկատվությունը սույն Կոնվենցիայի կամ համապատասխան արձանագրության բոլոր շահագրգիռ Պայմանավորվող Կողմերին:

Հոդված 2

1. Երկու կողմերի միջև ծագած վեճի դեպքում արբիտրաժային դատարանը կազմված է երեք անդամներից: Վեճի յուրաքանչյուր կողմ նշանակում է մեկական արբիտորի, և այդ կերպ նշանակված երկու արբիտորները փոխադարձ համաձայնությամբ նշանակում են երրորդ արբիտորին, որը կատարում է դատարանի նախագահի գործառույթները: Վերջինս չի կարող վեճի որևէ կողմի քաղաքացի հանդիսանալ, չի կարող մշտապես բնակվել այդ կողմերից որևէ մեկի տարածքում, չի կարող այդ կողմերից որևէ մեկի մոտ ծառայության մեջ գտնվել կամ տվյալ գործին որևէ այլ կերպ առնչություն ունենալ:

2. Ավելի քան երկու կողմերի միջև ծագած վեճի դեպքում վեճում ընդհանուր շահեր ունեցող կողմերը փոխադարձ համաձայնությամբ նշանակում են դատարանի մեկ անդամի:

3. Ցանկացած թափուր պաշտոն համալրվում է սկզբնական նշանակման համար նախատեսված ընթացակարգի համաձայն:

Հոդված 3

1. Եթե երկրորդ արբիտորին նշանակելուց հետո երկու ամսվա ընթացքում արբիտրաժային դատարանի նախագահ չի նշանակվում, ապա, կողմերի խնդրանքով, հաջորդ երկու ամսվա ընթացքում նրան նշանակում է Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր քարտուղարը:

2. Եթե վեճի կողմերից մեկը խնդրանքն ստանալուց հետո երկու ամսվա ընթացքում արբիտոր չի նշանակում, մյուս կողմը իրավունք ունի այդ մասին տեղեկացնել Գլխավոր քարտուղարին, որը նշանակում է կատարում հաջորդ երկու ամսվա ընթացքում:

Հոդված 4

Արբիտրաժային դատարանը կայացնում է իր որոշումները սույն Կոնվենցիայի, դրա ցանկացած համապատասխան արձանագրությունների դրույթներին և միջազգային իրավունքի նորմերին համապատասխան:

Հոդված 5

Եթե վեճի կողմերն այլ կերպ չեն պայմանավորվել, արբիտրաժային դատարանը սահմանում է իր ընթացակարգի սեփական կանոնները:

Հոդված 6

Արբիտրաժային դատարանը, կողմերից մեկի խնդրանքով, կարող է առաջարկել անհրաժեշտ ժամակավոր պաշտպանական միջոցներ:

Հոդված 7

Վեճի կողմերն օժանդակում են արբիտրաժային դատարանի աշխատանքին, և, մասնավորապես, օգտագործում են իրենց տրամադրության տակ գտնվող բոլոր հնարավորությունները.

ա) տրամադրում են գործին առնչվող բոլոր փաստաթղթերը, տեղեկությունը և նյութերը; և

բ) անհրաժեշտության դեպքում, հնարավորություն են ընձեռում կանչելու վկաներ կամ փորձագետներ և ծանոթանալու նրանց ցուցմունքներին:

Հոդված 8

Կողմերը և արբիտրոները պարտավոր են ապահովել իրենց կողմից արբիտրաժային դատաքննության ընթացքում գաղտնի կարգով ստացված ցանկացած տեղեկությունների գաղտնիությունը:

Հոդված 9

Եթե արբիտրաժային դատարանը, ելնելով գործի կոնկրետ հանգամանքներից, այլ որոշում չկայացնի, ապա դատական ծախսերը հավասարապես բաշխվում են վեճի կողմերի միջև: Դատարանը գրանցում է իր բոլոր ծախսերը և կողմերին վերջնական հաշվետվություն է ներկայացնում այդ ծախսերի վերաբերյալ:

Հոդված 10

Ցանկացած Պայմանավորվող Կողմ, որը վեճի առարկայում իրավական բնույթի շահ ունի, որը կարող է շոշափվել գործով կայացված որոշմամբ, իրավունք ունի, դատարանի համաձայնությամբ, մասնակցել գործի լսմանը:

Հոդված 11

Դատարանը կարող է լսել նաև անմիջականորեն վեճի առարկայից ծագող հակադարձ հայցերը և դրանց վերաբերյալ որոշումներ կայացնել:

Հոդված 12

Ընթացակարգային և գործի էությանը վերաբերող հարցերով արբիտրաժային դատարանի որոշումներն ընդունվում են դատարանի անդամների ձայների մեծամասնությամբ:

Հոդված 13

Եթե վեճի կողմերից մեկը չի ներկայանում արբիտրաժային դատարան կամ չի կարողանում հանդես գալ իր գործի պաշտպանությամբ, ապա մյուս կողմը կարող է խնդրել դատարանին շարունակել լսումները և վերջնական որոշում կայացնի: Կողմերից մեկի բացակայությունը կամ սեփական գործով պաշտպանությամբ հանդես գալու անհնարինությունը խոչընդոտ չի հանդիսանում դատաքննության համար: Մինչև վերջնական որոշում կայացնելը արբիտրաժային դատարանը պետք է համոզվի հայցի փաստացի և իրավաբանական հիմնավորության մեջ:

Հոդված 14

Դատարանը վերջնական որոշում է կայացնում իր վերջնական հիմնադրման ամսաթվից հինգ ամսվա ընթացքում, եթե անհրաժեշտ չի համարում այդ ժամկետը երկարաձգել ևս մեկ՝ հինգ ամիսը չգերազանցող ժամանակահատվածով:

Հոդված 15

Արբիտրաժային դատարանի վերջնական որոշումը սահմանափակվում է վեճի առարկայով և ուղեկցվում է այն դրդապատճառների բացատրությամբ, որոնց վրա հիմնված է: Այն ներառում է որոշման ընդունմանը մասնակցած անդամների անունները և վերջնական որոշման ընդունման ամսաթիվը: Դատարանի ցանկացած անդամ կարող է դրան կցել իր հատուկ կարծիքը կամ վերջնական որոշման հետ չհամընկնող կարծիքը:

Հոդված 16

Որոշումը վեճի կողմերի համար պարտադիր է: Այն ենթակա չէ բողոքարկման, եթե միայն կողմերը նախապես չեն պայմանավորվել բողոքարկման ընթացակարգի վերաբերյալ:

Հոդված 17

Ցանկացած տարաձայնություն, որը կարող է առաջանալ կողմերի միջև դատարանի վերջնական որոշման մեկնաբանման կամ կատարման վերաբերյալ, կարող է նրանցից մեկի կողմից հանձնվել այդ որոշումն ընդունած արբիտրաժային դատարանի քննարկմանը:

Մաս 2

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿՎՐԳ

Հոդված 1

Համաձայնեցման հանձնաժողովն ստեղծվում է վեճի կողմերից մեկի խնդրանքով: Եթե կողմերն այլ կերպ չեն պայմանավորվել, այդ հանձնաժողովը կազմվում է հինգ անդամից, որոնցից երկուսին նշանակում է յուրաքանչյուր շահագրգիռ կողմը, իսկ նախագահը համատեղ ընտրվում է այդ անդամների կողմից:

Հոդված 2

Ավելի քան երկու մասնակից կողմ ունեցող վեճի դեպքում, ընդհանուր շահեր ունեցող կողմերը, փոխադարձ համաձայնությամբ, միասին նշանակում են հանձնաժողովի իրենց անդամներին: Առանձին շահեր ունեցող երկու կամ ավելի կողմերի վեճի դեպքում կամ այդ կողմերի մոտ ընդհանուր շահերի առկայության մասին նրանց միջև պայմանավորվածության բացակայության դեպքում, անդամները նրանց կողմից նշանակվում են առանձին:

Հոդված 3

Եթե կողմերը չեն կատարում նախատեսված նշանակումները համաձայնեցման հանձնաժողով ստեղծելու առաջարկությունն ստանալու ամսաթվից երկու ամսվա ընթացքում, ապա Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր քարտուղարը, նման խնդրանք ներկայացրած կողմի համապատասխան դիմումի առկայության դեպքում, այդ նշանակումները կատարում է հաջորդ երկու ամսվա ընթացքում:

Հոդված 4

Եթե համաձայնեցման հանձնաժողովի վերջին անդամներին նշանակելու պահից երկու ամսվա ընթացքում համաձայնեցման հանձնաժողովի նախագահ չի ընտրվում, ապա Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր քարտուղարը, կողմերից մեկի համապատասխան դիմումի առկայության դեպքում, նախագահին նշանակում է հաջորդ երկու ամսվա ընթացքում:

Հոդված 5

Չհամաձայնեցման հանձնաժողովն իր որոշումներն ընդունում է անդամների ձայների մեծամասնությամբ: Եթե վեճի կողմերն այլ կերպ չեն պայմանավորվել, նա սահմանում է իր սեփական ընթացակարգը: Վեճի կարգավորման համար այն առաջարկություն է ներկայացնում, որը կողմերը բարեխղճորեն քննարկում են:

Հոդված 6

Չհամաձայնեցման հանձնաժողովի իրավասության նկատմամբ տարածայնությունն առաջանալու դեպքում հարցը լուծվում է այդ հանձնաժողովի կողմից:

**ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿՈՆՎԵՆՉԻԱՅԻ
ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ ԿԱՐԹԱԳԵՆՅԱՆ
ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Տ Ե Ք Ս Տ Ե Վ Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ Ն Ե Ր

CARTAGENA PROTOCOL ON BIOSAFETY TO THE CONVENTION ON BIOLOGICAL DIVERSITY

TEXT AND ANNEXES

Ստորև զետեղված է Կենսաբանական բազմազանության վերաբերյալ Կոնվենցիայի կենսաբանական անվտանգության մասին Կարթագենյան արձանագրության տեքստը:

Տեքստը թարգմանված է հետևյալ հրատարակությունից՝ Montreal, 2000. Copyright . 2000, Secretariat of the Convention on Biological Diversity. ISBN 92-807-1924-6.

Մատենագիտական, ինչպես նաև հղումներ կատարելու նպատակով հրատարակության վերնագիրը պետք է ձևակերպված լինի հետևյալ կերպ՝

Կենսաբանական բազմազանության վերաբերյալ Կոնվենցիայի քարտուղարություն (2000թ.):

Կենսաբանական բազմազանության վերաբերյալ Կոնվենցիայի Կենսաբանական անվտանգության մասին Կարթագենյան արձանագրություն՝ տեքստ և հավելվածներ: Մոնրեալ, Կենսաբանական բազմազանության վերաբերյալ Կոնվենցիայի քարտուղարություն:

Մանրամասն տեղեկությունների համար դիմել՝

The Secretariat of the Convention on Biological Diversity
World Trade Centre
393 St. Jacques, Suite 300
Montreal, Quebec, H2Y 1N9
Canada
Tel: 1(514) 288 2220
Fax: 1(514) 288 6588
E-mail: secretariat@biodiv.org
Webpage: <http://www.biodiv.org>

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կենսաբանական բազմազանության վերաբերյալ Կոնվենցիան վերջնականապես լրամշակվել է 1992թ. մայիսին Նայրոբիում, և ստորագրման համար բացվել է 1992թ. հունիսի 5-ին Ռիո-դե-ժանեյրոյում կայացած ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի և զարգացման կոնֆերանսի ժամանակ: Կոնվենցիան ուժի մեջ է մտել 1993թ. դեկտեմբերի 29-ին: Այսօր Կոնվենցիան կենսաբազմազանությանը վերաբերող խնդիրների լուծման հիմնական միջազգային փաստաթուղթն է: Այն ընձեռում է կենսաբանական բազմազանության պահպանության, բնական պաշարների կայուն օգտագործման և գենետիկ ռեսուրսների օգտագործումից ստացված օգուտների արդարացի ու հավասարաչափ բաշխման գլոբալ և համալիր մոտեցումների կիրառման հնարավորություն:

Կենսաբանական անվտանգությունը Կենսաբանական բազմազանության վերաբերյալ Կոնվենցիայի շրջանակներում քննարկվող հարցերից մեկն է: Այս հայեցակարգը բխում է ժամանակակից կենսատեխնոլոգիաների կիրառման արդյունքում ստացված մթերքների օգտագործման հնարավոր անբարենպաստ ազդեցություններից մարդու առողջության և բնական միջավայրի պահպանման անհրաժեշտությունից: Միևնույն ժամանակ լայն տարածում է ստացել այն իրողությունը, որ ժամանակակից կենսատեխնոլոգիան կարող է զգալիորեն նպաստել մարդու բարեկեցությանն առնչվող խնդիրների լուծմանը, հատկապես պարենային մթերքների, գյուղատնտեսության և առողջապահության հետ կապված կենսական պահանջարկների բավարարման առումով: Կոնվենցիան հստակորեն ընդունում է ժամանակակից կենսատեխնոլոգիայի երկակի բնույթը: Մի կողմից՝ այն մատչելի դարձնում և փոխանցման հնարավորություն է տալիս այնպիսի տեխնոլոգիաների (ներառյալ կենսատեխնոլոգիաները), որոնք էական են կենսաբանական բազմազանության պահպանության և կայուն օգտագործման համար (օր.՝ հողված 16 կետ 1 և հողված 19 կետ 1 և 2), մյուս կողմից՝ 8 (g) հոդվածը և 19 հոդվածի 3-րդ կետը նախատեսում են զարգացնել կենսատեխնոլոգիաների անվտանգությունն ուժեղացնող այնպիսի ընթացակարգեր, որոնք բխում են Կոնվենցիայի ընդհանուր նպատակից

և միտում ունեն նվազեցնելու կենսաբազմազանությանը սպառնացող բոլոր հնարավոր վտանգները՝ հաշվի առնելով նաև մարդու առողջությանը սպառնացող ռիսկերը: 8 (g) հոդվածը նախատեսում է մի շարք միջոցներ, որոնցով կողմերը ազգային մակարդակով, իսկ 19 հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ միջազգային իրավական փաստաթղթերի մշակման ճանապարհով, լուծելու են կենսանվտանգության խնդիրները:

Կոնվենցիայի Կողմերի կոնֆերանսը 1995թ. նոյեմբերին կայացած երկրորդ հանդիպման ժամանակ ստեղծեց Կենսաբանական անվտանգության հատուկ ժամանակավոր աշխատանքային խումբ: Այն պետք է մշակել կենսանվտանգության արձանագրության նախագիծ, ուշադրություն դարձնելով հատկապես ժամանակակից կենսատեխնոլոգիայի կիրառման արդյունքում ստացված որեւէ վերափոխված կենդանի օրգանիզմների անդրսահմանային տեղափոխմանը, որը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ կենսաբազմազանության պահպանության և կայուն զարգացման վրա: Մի քանի տարվա բանակցություններից հետո, 2000թ. հունվարի 29-ին Մոնրեալում կայացած Կողմերի կոնֆերանսի արտահերթ նիստում, վերջնականապես ձևակերպվեց և ընդունվեց կարևորագույն՝ Կենսաբանական բազմազանության վերաբերյալ Կոնվենցիայի կենսաբանական անվտանգության Կարթագենյան արձանագրությունը:

Կենսանվտանգության արձանագրության ընդունումը գնահատվեց որպես մշանակալի առաջընթաց քայլ, քանի որ ապահովում է միջազգային կարգավորող համակարգ, որը թույլ է տալիս համաձայնեցնել առևտրի և շրջակա միջավայրի պահպանության պահանջները համաշխարհային տնտեսության արագընթաց աճող ոլորտի՝ կենսատեխնոլոգիական արդյունաբերության հետ: Այսպիսով, Արձանագրությունը թույլ է տալիս ստեղծել բարենպաստ միջավայր կենսատեխնոլոգիաների անվտանգ կիրառման համար, առավելագույնս օգտվել դրա հնարավորություններից, միաժամանակ նվազագույնի հասցնելով շրջակա միջավայրին և մարդու առողջությանը սպառնացող վտանգները:

Կենսաբանական բազմազանության վերաբերյալ Կոնվենցիայի կենսաբանական անվտանգության մասին Կարթագենյան արձանագրություն

Սույն Արձանագրության Կողմերը,

հանդիսանալով կենսաբանական բազմազանության Կոնվենցիայի Կողմեր, այսուհետ՝ Կոնվենցիա,

հիմնվելով Կոնվենցիայի 19 հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի, 8 հոդվածի «գ» կետի և 17 հոդվածի վրա,

հիմնվելով նաև Կոնվենցիայի Կողմերի կոնֆերանսի 1995թ. նոյեմբերի 17-ի II/5 որոշման վրա, որի համաձայն պետք է մշակել կենսաբանական անվտանգության արձանագրությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով ժամանակակից կենսատեխնոլոգիայի կիրառման արդյունքում ստացված որևէ կենդանի վերափոխված օրգանիզմի անդրսահմանային տեղափոխմանը, ինչը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ կենսաբանական բազմազանության պահպանման ու կայուն օգտագործման վրա: Պետք է այն նախապատրաստել քննարկման, մասնավորապես, հստակեցնելով նաև նախապես հիմնավորված համաձայնեցման համապատասխան ընթացակարգերը,

վերահաստատելով կանխարգելիչ միջոցների ընդունման սկզբունքը, որն արտացոլված է շրջակա միջավայրի և զարգացման Ռիոյի հռչակագրի 15-րդ սկզբունքում,

գիտակցելով ժամանակակից կենսատեխնոլոգիայի արագ տարածումը, ինչպես նաև հանրության աճող անհանգստությունը՝ կապված կենսաբանական բազմազանության նկատմամբ դրա հնարավոր վնասակար ազդեցության հետ, հաշվի առնելով նաև մարդկանց առողջությանը սպառնացող վտանգը,

ընդունելով, որ ժամանակակից կենսատեխնոլոգիան մեծ հնարավորություններ է ստեղծում մարդկանց բարեկեցության բարձրացման համար, եթե այն զարգացվի և օգտագործվի շրջակա միջավայրի ու մարդկանց առողջության նկատմամբ համապատասխան անվտանգության միջոցների կիրառմամբ,

ընդունելով նաև ծագումնաբանական և գենետիկ բազմազանության կենտրոնների բացառիկ կարևորությունը մարդկության համար,

հաշվի առնելով բազմաթիվ երկրների, մասնավորապես զարգացող երկրների՝ կենդանի վերափոխված օրգանիզմների հետ կապված հայտնի և հնարավոր վտանգների բնույթի և ծավալների դեմ պայքարելու ոլորտում սահմանափակ հնարավորությունները,

ընդունելով, որ կայուն զարգացման հասնելուն ուղղված առևտրային և բնապահպանական համաձայնագրերը պետք է լինեն փոխլրացնող,

ընդգծելով, որ սույն Արձանագրությունը չի կարող ընկալվել որպես Կողմի՝ գոյություն ունեցող միջազգային համաձայնագրերով սահմանված իրավունքների և պարտավորությունների փոփոխություն ենթադրող,

հասկանալով, որ վերը նշվածը նպատակ չի հետապնդում սույն Արձանագրությունը ենթարկել այլ միջազգային համաձայնագրերին,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Նպատակը

Շրջակա միջավայրի և զարգացման Ռիոյի հռչակագրի 15-րդ սկզբունքում նշված նախազգուշական միջոցներին համապատասխան՝ սույն Արձանագրության նպատակն է ապահովել ժամանակակից կենսատեխնոլոգիայից (որը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ կենսաբանական բազմազանության պահպանման և կայուն օգտագործման վրա) բխող՝ կենդանի վերափոխված օրգանիզմների անվտանգ փոխանցման, մշակման և օգտագործման ոլորտում պաշտպանության համապատասխան մակարդակ՝ հաշվի առնելով նաև մարդկանց առողջությանը սպառնացող վտանգը, հատուկ ուշադրություն դարձնելով անդրսահմանային փոխադրումներին:

Հոդված 2

Ընդհանուր դրույթներ

1. Յուրաքանչյուր Կողմ կձեռնարկի անհրաժեշտ և համապատասխան իրավական, վարչական և այլ միջոցներ սույն Արձանագրությանը նախատեսված իր պարտականությունների կատարման համար:
2. Կենդանի որևէ վերափոխված օրգանիզմի ձեռքբերման, մշակման, փոխադրման, օգտագործման, փոխանցման և ազատ արձակման իրականացման ընթացքում Կողմերը կապահովեն կենսաբազմազանությանը սպառնացող վտանգի կանխարգելումը կամ նվազեցումը՝ հաշվի առնելով նաև մարդու առողջությանը սպառնացող վտանգը:
3. Սույն Արձանագրությունում ոչինչ ոչ մի կերպ չի վտանգում պետությունների ինքնիշխանությունը, սահմանված միջազգային իրավունքին համապատասխան, իրենց տարածքային ջրերի նկատմամբ և,

միջազգային իրավունքին համապատասխան, պետությունների ինքնիշխան իրավունքները և իրավասությունը իրենց բացառիկ տնտեսական գոտիներում և մայրցամաքային շելֆերի սահմաններում, ինչպես նաև միջազգային իրավունքով նախատեսված և համապատասխան միջազգային փաստաթղթերում ամրագրված բոլոր պետությունների նավերով և օդանավերով նավագնացության ու չվերթերի իրավունքներին և ազատությունների իրականացումը:

4. Սույն Արձանագրությունում ոչինչ չի մեկնաբանվում որպես Կողմի՝ այնպիսի գործողություններ իրականացնելու իրավունքի սահմանափակում, որն ապահովում է կենսաբազմազանության պահպանության և կայուն օգտագործման պաշտպանության՝ սույն Արձանագրությամբ նախատեսվածից բարձր մակարդակ՝ այն պայմանով, որ այդ գործողությունները համապատասխանեն սույն Արձանագրության նպատակին ու դրույթներին և այդ Կողմի՝ միջազգային իրավունքով նախատեսված այլ պարտավորություններին:

5. Կողմերին խրախուսվում է համապատասխան դեպքերում հաշվի առնել առկա փորձաքննությունը, մարդու առողջությանը սպառնացող վտանգի հարցերով զբաղվող միջազգային համաժողովներում ընդունված փաստաթղթերը, կատարված աշխատանքի արդյունքներն ու պայմանավորվածությունները:

Հոդված 3

Տերմինների օգտագործումը

Սույն Արձանագրության նպատակների համար.

- ա) «Կողմերի կոնֆերանս» նշանակում է՝ Կոնվենցիայի Կողմերի կոնֆերանս,
- բ) «օգտագործումը մեկուսացված համակարգերում» նշանակում է տեղադրման, կառուցման կամ այլ կառույցի շրջանակներում

իրականացվող ցանկացած գործողություն, որն ընդգրկում է կենդանի վերափոխված օրգանիզմներ, որոնք վերահսկվում են արտաքին միջավայրի հետ շփումը և նրա նկատմամբ ունեցած ազդեցությունը արդյունավետորեն սահմանափակող հատուկ միջոցներով,

- գ) «արտահանում» նշանակում է՝ կանխամտածված անդրսահմանային տեղափոխում մի Կողմից դեպի մյուս Կողմը,
- դ) «արտահանող» նշանակում է՝ արտահանող Կողմի իրավասության ներքո գտնվող ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը կազմակերպում է կենդանի վերափոխված օրգանիզմների արտահանումը,
- ե) «ներմուծում» նշանակում է՝ կանխամտածված անդրսահմանային տեղափոխում մի Կողմից դեպի մյուս Կողմը,
- զ) «ներմուծող» նշանակում է՝ ներմուծող Կողմի իրավասության ներքո գտնվող ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը կազմակերպում է կենդանի վերափոխված օրգանիզմների ներմուծումը,
- է) «կենդանի վերափոխված օրգանիզմ» նշանակում է՝ ցանկացած կենդանի օրգանիզմ, որը պարունակում է ժամանակակից կենսատեխնոլոգիայի օգտագործման շնորհիվ ստացված գենետիկական նյութի նոր համակցություն,
- ը) «կենդանի օրգանիզմ» նշանակում է՝ ցանկացած կենսաբանական գոյություն, որն ունի գենետիկ նյութի փոխանցման կամ վերարտադրման (ռեպլիկացիայի) ընդունակություն (ներառյալ ստերիլ օրգանիզմները, վիրուսները և վիրոիդները),
- թ) «ժամանակակից կենսատեխնոլոգիա» նշանակում է՝ կիրառել.

ա. նուկլեինաթթվի օգտագործման *in vitro* (օրգանիզմից դուրս) մեթոդը, ներառյալ ռեկոմբինանտային դեզօքսիրիբոնուկլեինաթթուն (ԴՆԹ) և նուկլեինաթթվի ուղղակի ներարկումը բջիջների կամ օրգանելայի մեջ, կամ

բ. տաքսոնոմիկ կարգավիճակ ունեցող օրգանիզմների բջիջների միացման մեթոդները, որոնք թույլ են տալիս հաղթահարել բնական ֆիզիոլոգիական վերարտադրվող կամ ռեկոմբինացիոն արգելքները և աճեցման ու սելեկցիայի ավանդական մեթոդ չեն հանդիսանում,

- ժ)** «տնտեսական ինտեգրացման տարածաշրջանային կազմակերպություն» նշանակում է՝ որոշակի տարածաշրջանի ինքնիշխան պետությունների կողմից ստեղծված կազմակերպություն, որին անդամակցող պետությունները փոխանցել են սույն Արձանագրությամբ կարգավորվող հարցերով իրավասությունը և որը պատշաճ կերպով լիազորված է, իր ներքին ընթացակարգերին համապատասխան, ստորագրել, վավերացնել, ընդունել, հավանություն տալ կամ միանալ Արձանագրությանը,
- ժա)** «անդրսահմանային տեղափոխություն» նշանակում է՝ կենդանի վերափոխված օրգանիզմի տեղափոխումը մի Կողմից դեպի մյուս Կողմը, բացառությամբ 17 և 24 հոդվածների, որոնց նպատակների իրականացման համար անդրսահմանային տեղափոխությունը տարածվում է Կողմերի և Կողմեր չհանդիսացող պետությունների միջև տեղափոխման վրա:

Հոդված 4

Կիրառման շրջանակը

Սույն Արձանագրությունը կիրառվի բոլոր կենդանի վերափոխված օրգանիզմների անդրսահմանային տեղափոխության, տարանցման, մշակման և օգտագործման նկատմամբ, որոնք կարող են անբարենպաստ ազդեցություն ունենալ կենսաբանական բազմազանության պահպանման և կայուն օգտագործման վրա, հաշվի առնելով նաև մարդկանց առողջությանը սպառնացող վտանգը:

Հոդված 5

Դեղագործական պատրաստուկներ

Անկախ հոդվածից և չվտանգելով նախքան ներմուծման վերաբերյալ որոշման ընդունումը բոլոր կենդանի վերափոխված օրգանիզմ-

ների նկատմամբ ռիսկի գնահատման Կողմի իրավունքը՝ սույն Արձանագրությունը չի կիրառվի մարդկանց համար դեղագործական պատրաստուկ հանդիսացող կենդանի վերափոխված օրգանիզմների անդրսահմանային տեղափոխման նկատմամբ: Վերջինս կարգավորվում է այլ համապատասխան միջազգային համաձայնագրերով կամ կազմակերպությունների կողմից:

Հոդված 6

Տարանցումը և օգտագործումը մեկուսացված համակարգերում

1. Անկախ 4 հոդվածից և չսահմանափակելով իր տարածքով կենդանի վերափոխված օրգանիզմների տեղափոխությունը կարգավորելու և, 2 հոդվածի 3-րդ կետի համաձայն, իր տարածքով որոշակի կենդանի վերափոխված օրգանիզմների տարանցման կապակցությամբ Կողմի ցանկացած որոշումը կենսաբանական անվտանգության տեղեկատվություն տրամադրող հաստատություն (Biosafety Clearing-House) ներկայացնելու վերաբերյալ տարանցման Կողմի իրավունքը՝ սույն Արձանագրության դրույթները նախապես հիմնավորված համաձայնության ընթացակարգի վերաբերյալ չեն կիրառվում կենդանի վերափոխված օրգանիզմների նկատմամբ՝ վերջիններիս տարանցման դեպքում:

2. Անկախ 4 հոդվածի դրույթներից և չսահմանափակելով մինչև ներմուծման վերաբերյալ որոշման ընդունումը բոլոր կենդանի վերափոխված օրգանիզմների նկատմամբ ռիսկի գնահատման և վերջիններիս մեկուսացված համակարգերում օգտագործման համար Կողմի իրավասության շրջանակներում նորմաներ սահմանելու վերաբերյալ Կողմերի իրավունքը՝ նախապես հիմնավորված համաձայնության ընթացակարգի վերաբերյալ սույն Արձանագրության դրույթները չեն կիրառվում մեկուսացած համակարգերում օգտագործման համար նախատեսված կենդանի վերափոխված օրգանիզմների անդրսահմանային տեղափոխման նկատմամբ, որն իրականացվում է ներմուծող Կողմերի նորմերի համաձայն:

Հոդված 7

Նախապես հիմնավորված համաձայնության ընթացակարգի կիրառումը

1. Համաձայն 5 և 6 հոդվածների, 8-ից 10 և 12 հոդվածներում նախատեսված՝ նախապես հիմնավորված համաձայնության ընթացակարգը կկիրառվի մինչև ներմուծող Կողմի շրջակա միջավայրում կանխամտածված ներմուծման համար նախատեսված կենդանի վերափոխված օրգանիզմների առաջին կանխամտածված անդրսահմանային տեղափոխումը:
2. Վերոհիշյալ 1-ին կետում «շրջակա միջավայրում կանխամտածված ներմուծում»-ը չի վերաբերում այն կենդանի վերափոխված օրգանիզմներին, որոնք նախատեսված են որպես մթերք կամ կեր ուղղակի օգտագործման կամ վերամշակման համար:
3. 11 հոդվածը կկիրառվի մինչև կենդանի վերափոխված օրգանիզմների (որոնք նախատեսված են որպես մթերք կամ կեր ուղղակի օգտագործման կամ վերամշակման համար) առաջին անդրսահմանային տեղափոխումը:
4. Նախապես հիմնավորված համաձայնության ընթացակարգը չի կիրառվի այն կենդանի վերափոխված օրգանիզմների կանխամտածված անդրսահմանային տեղափոխման նկատմամբ, որոնք, ինչպես նշված է սույն Արձանագրության Կողմերի հանդիպում հանդիսացող Կողմերի կոնֆերանսի որոշման մեջ, հազիվ թե ի վիճակի լինեն անբարենպաստ ազդեցություն գործել կենսաբանական բազմազանության պահպանման և կայուն օգտագործման վրա՝ հաշվի առնելով նաև մարդու առողջությանը սպառնացող վտանգը:

Հոդված 8

Ծանուցում

1. Արտահանող Կողմը կծանուցի կամ կպահանջի, արտահանողը ապահովի գրավոր ծանուցումը ներմուծող Կողմի ազգային իրավասու մարմնին մինչև 7 հոդվածի 1-ին կետի շրջանակներում իրականացվող կենդանի վերափոխված օրգանիզմների կանխամտածված անդրսահմանային տեղափոխումը: Ծանուցումը կպարունակի նվազագույնը 1 հավելվածում նշված տեղեկատվությունը:
2. Արտահանող Կողմը կապահովի այն իրավական պահանջների առկայությունը, որոնք անհրաժեշտ են արտահանողի կողմից ներկայացված տեղեկատվության ճշգրիտ լինելու համար:

Հոդված 9

Ծանուցման ստացման հավաստումը

1. Ներմուծող Կողմը ծանուցողին գրավոր հավաստում է ծանուցման ստացումը՝ ստացման օրվանից 90 օրվա ընթացքում:
2. Հավաստման մեջ պետք է նշվի՝
 - ա) ծանուցման ստացման ամսաթիվը,
 - բ) արդյոք ծանուցումը *prima facie* պարունակու՞մ է 8 հոդվածում նշված *prima facie* տեղեկատվությունը,
 - գ) կարելի՞ է արդյոք սկսել հետագա միջոցառումների իրականացումը ներմուծող Կողմի ներքին կանոնների կամ 10 հոդվածում նշված ընթացակարգի համաձայն:

3. 2-րդ կետի «գ» ենթակետում նշված ներքին կանոնները պետք է համապատասխանեն սույն Արձանագրությանը:

4. Ծանուցման ստացումը ներմուծողի կողմից չհավաստվելը չի ենթադրում կանխամտածված անդրսահմանային տեղափոխման համար այդ Կողմի համաձայնություն:

Հոդված 10

Որոշումների ընդունման ընթացակարգը

1. Ներմուծող Կողմի ընդունած որոշումները պետք է համապատասխանեն 15 հոդվածին:

2. Ներմուծող Կողմը պետք է 9 հոդվածում նշված ժամանակահատվածում ծանուցողին գրավոր տեղեկացնի՝ արդյոք կանխամտածված անդրսահմանային տեղափոխումը կարո՞ղ է իրականացվել՝

ա) միայն ներմուծող Կողմի գրավոր համաձայնության դեպքում,

բ) 90 օրից ոչ շուտ՝ առանց հետագա գրավոր համաձայնության:

3. Ծանուցման ստացման օրվանից երկու հարյուր յոթանասուն օրվա ընթացքում ներմուծող Կողմը 2-րդ կետի «ա» ենթակետում հիշատակված իր որոշման մասին գրավոր կտեղեկացնի ծանուցողին և կենսանվտանգության տեղեկատվություն տրամադրող հաստատությանը.

ա) թույլատրել ներմուծումը որոշակի պայմաններով կամ առանց դրանց՝ ներառյալ այն, թե ինչպես է կիրառվելու որոշումը նույն կենդանի վերափոխված օրգանիզմների հետագա ներմուծումների նկատմամբ,

բ) արգելել ներմուծումը,

գ) պահանջել համապատասխան լրացուցիչ տեղեկատվություն՝ համաձայն իր ներքին կանոնների կամ I հավելվածի: Ներ-

մուծող Կողմի պատասխանի ժամկետները սահմանելիս հաշվի չի առնվում այն օրերի քանակը, որոնց ընթացքում ներմուծող Կողմը սպասում է համապատասխան լրացուցիչ տեղեկատվության, կամ

դ) տեղեկացնում է ծանուցողին այն մասին, որ սույն կետում նշված ժամկետները երկարաձգվում են որոշակի ժամանակահատվածով:

4. Բացի այն դեպքերից, երբ առկա է բացարձակ համաձայնություն, 3-րդ կետում նշված որոշման մեջ պետք է նշվեն դրա ընդունման հիմքում ընկած պատճառները:

5. Եթե ներմուծող Կողմը ծանուցման ստացման օրվանից երկու հարյուր յոթանասուն օրվա ընթացքում չի տեղեկացնում իր որոշման մասին, դա չի նշանակում կանխամտածված անդրսահմանային տեղափոխման վերաբերյալ համաձայնություն:

6. Ներմուծող Կողմում կենսաբանական բազմազանության պահպանման և կայուն օգտագործման վրա (հաշվի առնելով նաև մարդու առողջությանը սպառնացող վտանգը) կենդանի վերափոխված օրգանիզմի հնարավոր անբարենպաստ ազդեցության ծավալի վերաբերյալ համապատասխան ոչ բավարար գիտական տեղեկատվության և գիտելիքների պատճառով գիտական հավաստի փաստերի բացակայությունն արգելք չի հանդիսանում կենդանի վերափոխված օրգանիզմի ներմուծման վերաբերյալ ներմուծող Կողմի համապատասխան որոշման ընդունման համար, ինչպես նշված է վերոհիշյալ 3-րդ կետում, այդպիսի հավանական անբարենպաստ ազդեցությունից խուսափելու կամ այդ ազդեցությունը նվազեցնելու նպատակով:

7. Կողմերի կոնֆերանս հանդիսացող հանդիպումն իր առաջին նիստի ժամանակ համապատասխան ընթացակարգերով և մեխանիզմներով որոշում կընդունի դյուրացնել ներմուծող Կողմի որոշման ընդունումը:

Հոդված 11

Որպես մթերք կամ կեր անմիջական օգտագործման կամ վերամշակման համար նախատեսված կենդանի վերափոխված օրգանիզմների վերաբերյալ ընթացակարգ

1. Կողմը, որը վերջնական որոշում է ընդունում այն կենդանի վերափոխված օրգանիզմի ներքին օգտագործման (ներառյալ վերջինիս իրացումը շուկայում) վերաբերյալ, որը կարող է որպես մթերք կամ կեր անմիջական օգտագործման կամ վերամշակման նպատակով անդր-սահմանային տեղափոխման առարկա դառնալ, նման որոշումն ընդունելուց տասնհինգ օրվա ընթացքում տեղեկացնում է Կողմերին՝ կենսանվտանգության տեղեկատվություն տրամադրող հաստատության միջոցով: Այդպիսի տեղեկատվությունը պետք է ընդգրկի առնվազն II հավելվածում նշված տվյալները: Կողմը տեղեկատվական գրավոր նյութերի պատճենները կտրամադրի յուրաքանչյուր Կողմի այն ազգային համակարգման կենտրոնին, որը նախապես տեղեկացնում է քարտուղարությանը, որ ինքը կենսանվտանգության տեղեկատվություն տրամադրող հաստատության ծառայությունից չի կարող օգտվել: Այս դրույթը չի տարածվի դաշտային պայմաններում փորձարկումներին վերաբերող որոշումների վրա:
2. Վերոհիշյալ 1-ին կետի համաձայն, որոշում ընդունող Կողմը կապահովի դիմողի տրամադրած տեղեկատվության ճշգրիտ լինելու մասին իրավական պահանջի առկայությունը:
3. Ցանկացած Կողմ կարող է պահանջել լրացուցիչ տեղեկատվություն II հավելվածի «բ» կետում նշված մարմնից:
4. Կողմը կարող է, իր ներքին կանոնների համաձայն, որոշում ընդունել որպես մթերք կամ կեր կամ վերամշակման նպատակով անմիջական օգտագործման համար նախատեսված կենդանի վերափոխ-

ված օրգանիզմների վերաբերյալ, որը համապատասխանում է սույն Արձանագրության նպատակներին:

5. Յուրաքանչյուր Կողմ կենսանվտանգության տեղեկատվություն տրամադրող հաստատությանը տրամադրում է ցանկացած ազգային օրենքի, կանոնի և ղեկավար սկզբունքի պատճենները, որոնք կիրառվում են որպես մթերք կամ կեր վերամշակման նպատակով անմիջական օգտագործման համար նախատեսված կենդանի վերափոխված օրգանիզմների ներմուծման նկատմամբ, եթե այդպիսիք կան:

6. Ջարգացող երկիր հանդիսացող Կողմը կամ անցումային տնտեսությամբ Կողմը վերոհիշյալ 4-րդ կետում նշված ներքին օրենսդրական հիմքերի բացակայության պայմաններում, իրականացնելով իր ներքին իրավասությունը, կարող է կենսանվտանգության՝ տեղեկատվություն տրամադրող հաստատության միջոցով հայտարարել, որ մինչև որպես մթերք կամ կեր վերամշակման նպատակով անմիջական օգտագործման համար նախատեսված կենդանի վերափոխված օրգանիզմի առաջին ներմուծումն իր ընդունած որոշումը, որի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է վերոհիշյալ 1-ին կետի համաձայն, կընդունվի՝ համաձայն.

ա) III հավելվածին համապատասխան իրականացված ռիսկի գնահատման, և

բ) ենթադրվող ժամկետներում ընդունված որոշման, որոնք չեն գերազանցում երկու հարյուր յոթանասուն օրը:

7. Վերոհիշյալ 6-րդ կետին համապատասխան՝ Կողմի որոշման մասին չտեղեկացնելը չի նշանակում որպես մթերք, կեր կամ վերամշակման նպատակով անմիջական օգտագործման համար նախատեսված կենդանի վերափոխված օրգանիզմների ներմուծման վերաբերյալ համաձայնություն կամ մերժում, եթե Կողմի կողմից այլ բան սահմանված չէ:

8. Ներմուծող Կողմում կենսաբանական բազմազանության պահպանության և կայուն օգտագործման վրա, հաշվի առնելով նաև մարդու

առողջությանը սպառնացող վտանգը, կենդանի վերափոխված օրգանիզմի հնարավոր անբերենպաստ ազդեցության ծավալների վերաբերյալ համապատասխան ոչ բավարար գիտական տեղեկատվության պատճառով գիտական հավաստի փաստերի բացակայությունն արգելք չի հանդիսանում որպես մթերք կամ կեր անմիջական օգտագործման կամ վերամշակման համար նախատեսված կենդանի վերափոխված օրգանիզմի ներմուծման վերաբերյալ ներմուծող Կողմի որոշման ընդունման համար՝ այդպիսի հնարավոր անբարենպաստ ազդեցությունից խուսափելու կամ այդ ազդեցությունը նվազեցնելու նպատակով:

9. Կողմը կարող է նշել ֆինանսական և տեխնիկական օգնության և որպես մթերք կամ կեր կամ վերամշակման նպատակով անմիջական օգտագործման համար նախատեսված կենդանի վերափոխված օրգանիզմների ծավալների վերաբերյալ իր կարիքները: Կողմերը կհամագործակցեն այդ կարիքները բավարարելու համար՝ 22 և 28 հոդվածներին համապատասխան:

Հոդված 12

Որոշումների վերանայումը

1. Ներմուծող Կողմը կարող է ցանկացած ժամանակ կենսաբանական բազմազանության պահպանման և կայուն օգտագործման վրա հնարավոր անբարենպաստ ազդեցության վերաբերյալ նոր գիտական տեղեկատվության լույսի ներքո, հաշվի առնելով նաև մարդու առողջությանը սպառնացող վտանգը, վերանայել և փոփոխել որոշումը՝ կանխանատված անդրսահմանային տեղափոխման վերաբերյալ: Այդ դեպքում տվյալ Կողմը 30 օրվա ընթացքում կտեղեկացնի որևէ ծանուցողի (նաև՝ կենսանվտանգության՝ տեղեկատվություն տրամադրող հաստատությանը), որը նախօրոք տեղեկացվել է նման որոշման մեջ նշված կենդանի վերափոխված օրգանիզմի տեղափոխումների մասին, և կներկայացնի իր որոշման ընդունման պատճառները:

2. Արտահանող Կողմը կամ ծանուցողը կարող է խնդրել ներմուծող Կողմին՝ վերանայել իր վերաբերյալ որոշումը, որն ընդունվել է 10 հոդվածին համապատասխան, եթե արտահանող Կողմը կամ ծանուցողը գտնում է, որ՝

ա) տեղի է ունեցել այնպիսի հանգամանքների փոփոխություն (որը կարող է ազդել ռիսկի գնահատման արդյունքի վրա), որոնց հիման վրա ընդունվել է որոշումը, կամ

բ) ի հայտ է եկել համապատասխան լրացուցիչ գիտական կամ տեխնիկական տեղեկատվություն:

3. Ներմուծող Կողմը գրավոր կպատասխանի այդ խնդրանքին 90 օրվա ընթացքում և կներկայացնի որոշման ընդունման պատճառները:

4. Ներմուծող Կողմը, իր հայեցողությամբ, կարող է խնդրել ռիսկի գնահատում հետագա ներմուծումների համար:

Հոդված 13

Պարզեցված ընթացակարգ

1. Ներմուծող Կողմը կարող է՝ պայմանով, որ սույն Արձանագրության նպատակներին համապատասխան կիրառվել են համապատասխան միջոցներ կենդանի վերափոխված օրգանիզմների կանխամտածված անդրսահմանային անվտանգ տեղափոխումը ապահովելու համար, կենսանվտանգության՝ տեղեկատվություն տրամադրող հաստատությանը նախապես հայտնել.

ա) այն դեպքերի մասին, երբ կանխամտածված անդրսահմանային տեղափոխումը դեպի իր տարածք կարող է կատարվել միևնույն ժամանակ, երբ այդ տեղափոխման մասին ինքը ծանուցվել է,

բ) կենդանի վերափոխված օրգանիզմների այն ներմուծումների մասին, որոնք «ազատվում են» նախապես հիմնավորված համաձայնության ընթացակարգից:

Վերոհիշյալ «ա» ենթակետի ծանուցումները կարող են կիրառվել դեպի միևնույն Կողմը իրականացվող հետագա նմանատիպ տեղափոխումների նկատմամբ:

2. 1-ին կետի «ա» ենթակետում նշված ծանուցումներում պարունակվող կանխամտածված անդրսահմանային տեղափոխության վերաբերյալ տեղեկատվությունը պետք է լինի այն տեղեկատվությունը, որը նշված է I հավելվածում:

Հոդված 14

Երկկողմ, տարածաշրջանային և բազմակողմ համաձայնագրեր և պայմանավորվածություններ

1. Կողմերը կարող են կնքել երկկողմ, տարածաշրջանային և բազմակողմ համաձայնագրեր և պայմանավորվածություններ կենդանի վերափոխված օրգանիզմների կանխամտածված անդրսահմանային տեղափոխությունների վերաբերյալ՝ սույն Արձանագրության նպատակին համապատասխան և պայմանով, որ այդ համաձայնագրերն ու պայմանավորվածությունները չեն հանգեցնի սույն Արձանագրությամբ նախատեսվածից ավելի ցածր պահպանության մակարդակի:

2. Կողմերը կենսանվտանգության տեղեկատվություն տրամադրող հաստատության միջոցով միմյանց կտեղեկացնեն նման երկկողմ, տարածաշրջանային և բազմակողմ համաձայնագրերի և պայմանավորվածությունների մասին, որոնք կնքվել են սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու օրվանից առաջ կամ հետո:

3. Սույն Արձանագրության դրույթները չեն ազդի Կողմերի միջև կնքված նման համաձայնագրերի և պայմանավորվածությունների համաձայն իրականացվող կանխամտածված անդրսահմանային տեղափոխությունների վրա:

4. Ցանկացած Կողմ կարող է որոշել, որ իր ներքին կանոնները կկիրառվեն իր որոշակի ներմուծումների նկատմամբ, և իր որոշման մասին կտեղեկացնի կենսանվտանգության տեղեկատվություն տրամադրող հաստատությանը:

Հոդված 15

Ռիսկի գնահատումը

1. Սույն Արձանագրության համաձայն իրականացվող ռիսկի գնահատումը կկատարվի գիտականորեն հիմնավորված ձևով՝ համաձայն III հավելվածի և հաշվի առնելով ռիսկի գնահատման ընդունված մեթոդները: Ռիսկի նման գնահատումները կհիմնվեն առնվազն 8 հոդվածին համապատասխան տրված տեղեկատվության և այլ առկա գիտական տվյալների վրա՝ որոշելու և գնահատելու համար կենսաբանական բազմազանության պահպանման և կայուն օգտագործման վրա կենդանի վերափոխված օրգանիզմների հնարավոր անբարենպաստ ազդեցությունը, հաշվի առնելով նաև մարդու առողջությանը սպառնացող վտանգը:

2. Ներմուծող Կողմը կապահովի, որպեսզի 10 հոդվածի համաձայն որոշումներ ընդունելու համար անցկացվի ռիսկի գնահատում: Նա կարող է արտահանողից պահանջել ռիսկի գնահատման անցկացում:

3. Ռիսկերի գնահատման իրականացման հետ կապված ծախսերը կրում է ծանուցողը, եթե ներմուծող Կողմը այդպիսի պահանջ է ներկայացնում:

Հոդված 16

Ռիսկի կարգավորումը

1. Հաշվի առնելով Կոնվենցիայի 8 հոդվածի «է» կետը՝ Կողմերը կմշակեն և կպահպանեն այն ռիսկերի կարգավորման, նվազեցման և վերահսկման համապատասխան մեխանիզմները, միջոցներն ու ռազմավարությունը, որոնք վերաբերում են սույն Արձանագրության դրույթներով սահմանված՝ կենդանի վերափոխված օրգանիզմների օգտագործման, մշակման և անդրսահմանային տեղափոխման վերաբերյալ ռիսկի գնահատմանը:
2. Ռիսկի գնահատման արդյունքների վրա հիմնված միջոցառումները կիրականացվեն այնքանով, որքանով անհրաժեշտ են ներմուծող Կողմի տարածքում կենսաբանական բազմազանության պահպանման և կայուն օգտագործման վրա կենդանի վերափոխված օրգանիզմի անբարենպաստ ազդեցությունը կանխարգելելու համար՝ հաշվի առնելով նաև մարդու առողջությանը սպառնացող վտանգը:
3. Յուրաքանչյուր Կողմ կձեռնարկի համապատասխան միջոցներ՝ կանխելու համար կենդանի վերափոխված օրգանիզմների ոչ կանխամտածված անդրսահմանային տեղափոխությունները (ներառյալ այնպիսի միջոցը, ինչպիսին է ռիսկի գնահատման պահանջի ներկայացումը մինչև կենդանի վերափոխված օրգանիզմի առաջին ազատ արձակումը):
4. Չվնասելով վերը նշված 2-րդ կետը՝ յուրաքանչյուր Կողմ կծգտի ապահովել, որ ցանկացած կենդանի վերափոխված օրգանիզմ (ինչպես ներմուծված, այնպես էլ իր կողմից ստեղծված) անցնի իր կյանքի շրջափուլին կամ վերարտադրության ժամանակահատվածին համապատասխան դիտարկում՝ մինչև նրա ենթադրվող օգտագործումը:

5. Կողմերի համագործակցության նպատակն է՝
- ա) կենդանի վերափոխված օրգանիզմների կամ կենդանի վերափոխված օրգանիզմների որոշակի առանձնահատկությունների բացահայտումը, որոնք կարող են անբարենպաստ ազդեցություն գործել կենսաբանական բազմազանության պահպանման և կայուն օգտագործման վրա, հաշվի առնելով նաև մարդու առողջությանը սպառնացող վտանգը,
 - բ) ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ նման կենդանի վերափոխված օրգանիզմների կիրառման կամ դրանց որոշակի առանձնահատկությունների նկատմամբ:

Հոդված 17

Զկանխամտածված անդրսահմանային տեղափոխություններ և արտակարգ միջոցառումներ

1. Յուրաքանչյուր Կողմ համապատասխան միջոցներ կձեռնարկի ծանուցելու համար ներգրավված կամ ներգրավման ենթակա պետություններին, անհրաժեշտության դեպքում՝ կենսանվտանգության տեղեկատվություն տրամադրող հաստատությանը, համապատասխան միջազգային կազմակերպություններին, եթե իրեն հայտնի է դառնում իր իրավասության ներքո գտնվող այնպիսի դեպքի մասին, որի արդյունքում տեղի է ունենում ազատ արձակում, որը հանգեցրել է կամ կարող է հանգեցնել կենդանի վերափոխված օրգանիզմների չկանխամտածված անդրսահմանային տեղափոխության, որը կարող է անբարենպաստ ազդեցություն գործել կենսաբանական բազմազանության պահպանման և կայուն օգտագործման վրա, հաշվի առնելով նաև մարդու առողջությանը սպառնացող վտանգը այդ պետություններում: Ծանուցումը կուղարկվի վերոհիշյալ իրավիճակի մասին Կողմին հայտնի դառնալուն պես:

2. Յուրաքանչյուր Կողմ սույն Արձանագրությունն իր համար ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ, կենսանվտանգության տեղեկատվություն

տրամադրող հաստատությանը տրամադրում է համապատասխան մանրամասն տեղեկատվություն հաղորդակցման կետի նշանակման մասին՝ սույն հոդվածի համաձայն ծանուցումներ ստանալու նպատակով:

3. Վերոհիշյալ 1-ին կետի համաձայն, ցանկացած ծանուցում պետք է պարունակի.

ա) առկա համապատասխան տեղեկատվություն կենդանի վերափոխված օրգանիզմի ենթադրվող քանակների և համապատասխան բնութագրերի և/կամ հատկանիշների վերաբերյալ,

բ) տեղեկատվություն կենդանի վերափոխված օրգանիզմ ազատ արձակման հանգամանքների և ենթադրվող ամսաթվի ու ծագման Կողմում կենդանի վերափոխված օրգանիզմի օգտագործման վերաբերյալ,

գ) գոյություն ունեցող ցանկացած տեղեկատվություն կենսաբանական բազմազանության պահպանման և կայուն օգտագործման վրա հնարավոր անբարենպաստ ազդեցության վերաբերյալ, հաշվի առնելով նաև մարդու առողջությանը սպառնացող վտանգը, ինչպես նաև վտանգի կարգավորման հնարավոր միջոցառումների վերաբերյալ առկա տեղեկատվությունը,

դ) ցանկացած այլ համապատասխան տեղեկատվություն, և

ե) տեղեկատվություն հետագա տեղեկատվություն ստանալու համար հաղորդակցման կետի վերաբերյալ:

4. Յուրաքանչյուր Կողմ, որի իրավասությանն է վերաբերում 1-ին կետում նշված կենդանի վերափոխված օրգանիզմի ազատ արձակումը, անմիջապես խորհրդատվություն կանցկացնի ներգրավված կամ ներգրավման ենթակա պետությունների հետ, որպեսզի նրանք կարողանան որոշել համարժեք պատասխան գործողությունները և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն, ներառյալ արտակարգ միջոցառումները, կենսաբանական բազմազանության պահպանման և կայուն օգտագործման վրա ցանկացած որոշակի անբարենպաստ ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով, հաշվի առնելով նաև մարդու առողջությանը սպառնացող վտանգը:

Հոդված 18

Վերամշակում, տեղափոխում, փաթեթավորում և ճշգրտում

1. Կենսաբանական բազմազանության պահպանման և կայուն օգտագործման վրա անբարենպաստ ազդեցությունից (հաշվի առնելով նաև մարդու առողջությանը սպառնացող վտանգը) խուսափելու համար յուրաքանչյուր Կողմ կձեռնարկի անհրաժեշտ միջոցներ, որպեսզի սույն Արձանագրության շրջանակներում կանխամտածված անդր-սահմանային տեղափոխության ենթակա կենդանի վերափոխված օրգանիզմները վերամշակվեն, փաթեթավորվեն և տեղափոխվեն՝ համաձայն համապատասխան միջազգային կանոնների և ստանդարտների:

2. Յուրաքանչյուր Կողմ կձեռնարկի միջոցներ, ըստ որոնց պահանջվում է, որ այն փաստաթղթերում, որոնք ուղեկցում են՝

ա) որպես մթերք կամ կեր անմիջական օգտագործման կամ վերամշակման համար նախատեսված կենդանի վերափոխված օրգանիզմները, ճշգրիտ նշվի, որ վերջիններս «կարող են պարունակել» կենդանի վերափոխված օրգանիզմներ և նախատեսված չեն շրջակա միջավայրում կանխամտածված ներմուծման համար, ինչպես նաև հետագա տեղեկատվություն ստանալու համար հաղորդակցման կետը: Սույն Արձանագրության Կողմերի հանդիպում հանդիսացող Կողմերի կոնֆերանսը սույն Արձանագրության ուժի մեջ մտնելուց 2 տարուց ոչ ուշ այդ նպատակով որոշում է ընդունում մանրամասն պահանջների վերաբերյալ (ներառյալ նշված օրգանիզմների ճանաչման մանրամասները և անխտիր բոլոր առանձնահատուկ հատկանիշները),

բ) մեկուսացած համակարգերում օգտագործման համար նախատեսված կենդանի վերափոխված օրգանիզմները, հստակ սահմանվեն որպես կենդանի վերափոխված օրգանիզմներ և նշվեն անվտանգ վերամշակման, պահպանման, տեղափոխման և օգտագործման համար անհրաժեշտ պահանջները, հե-

տազայում տեղեկատվություն ստանալու համար հաղորդակցման կետը (ներառյալ այն անձի անունն ու հասցեն և այն հաստատության անվանումը և հասցեն, ում ուղարկվում են կենդանի վերափոխված օրգանիզմները),

գ) ներմուծող Կողմի շրջակա միջավայրում կանխամտածված ներմուծման համար նախատեսված կենդանի վերափոխված օրգանիզմները և սույն Արձանագրության շրջանակներում ցանկացած այլ կենդանի վերափոխված օրգանիզմ, հստակ սահմանվեն որպես կենդանի վերափոխված օրգանիզմներ՝ նշելով դրանց առանձնահատկությունները, համապատասխան հատկանիշները և/կամ բնութագրերը, անվտանգ վերամշակման, պահպանման, փոխադրման և օգտագործման վերաբերյալ ցանկացած պահանջ, հետագայում տեղեկատվություն ստանալու համար հաղորդակցման կետը և, համապատասխան դեպքերում, ներմուծողի և արտահանողի անունը/անվանումն ու հասցեն և պարունակեն հայտարարություն, որ փոխադրումն իրականացվում է արտահանողի նկատմամբ կիրառվող սույն Արձանագրության պահանջներին համապատասխան:

3. Կողմերի կոնֆերանսը, հանդիսանալով սույն Արձանագրության Կողմերի հանդիպում, կքննարկի մշակվող նորմերի մշակման անհրաժեշտությունը և մեթոդները՝ կապված ճանաչման, վերամշակման, փաթեթավորման և տեղափոխման պրակտիկայի հետ, խորհրդակցելով այլ համապատասխան միջազգային մարմինների հետ:

Հոդված 19

Ազգային իրավասու մարմիններ և ազգային համակարգող կենտրոններ

1. Յուրաքանչյուր Կողմ կնշանակի մեկ ազգային համակարգող կենտրոն, որն իր անունից պատասխանատու կլինի քարտուղարութ-

յան հետ կապի համար: Յուրաքանչյուր Կողմ կնշանակի նաև մեկ կամ ավելի ազգային իրավասու մարմիններ, որոնք պատասխանատու կլինեն սույն Արձանագրությամբ պահանջվող վարչական գործառնությունների կատարման համար և լիազորված՝ Կողմի անունից հանդես գալու այդ գործառնությունների հետ կապված: Կողմը կարող է նշանակել մեկ մարմին ինչպես համակարգող կենտրոնի, այնպես էլ ազգային իրավասու մարմնի գործառնությունների կատարման համար:

2. Սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ յուրաքանչյուր Կողմ կհայտնի քարտուղարությանը իր համակարգող կենտրոնի և իրավասու ազգային մարմնի կամ մարմինների անվանումները և հասցեները: Եթե Կողմը նշանակում է մեկից ավելի իրավասու ազգային մարմին, ապա իր ծանուցման հետ միասին քարտուղարությանը պետք է տրամադրի այդ մարմինների համապատասխան պարտականությունների վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն: Անհրաժեշտության դեպքում այդպիսի տեղեկատվության մեջ առնվազն պետք է նշվի, թե որ իրավասու մարմինն է զբաղվում այս կամ այն տեսակի կենդանի վերափոխված օրգանիզմով: Յուրաքանչյուր Կողմ անհապաղ կտեղեկացնի քարտուղարությանը իր ազգային համակարգող կենտրոնների կամ իրավասու ազգային մարմնի կամ մարմինների նշանակման, անվանումների և հասցեների կամ պարտականությունների հետ կապված ցանկացած փոփոխության մասին;

3. Քարտուղարությունն անհապաղ կտեղեկացնի Կողմերին ծանուցումների ստացման մասին, համաձայն վերը նշված 2-րդ կետի, և տեղեկատվությունը մատչելի կդարձնի նաև կենսաբանական անվտանգության՝ տեղեկատվություն տրամադրող հաստատության միջոցով:

Հոդված 20

Տեղեկատվության փոխանակում և կենսաբանական անվտանգության՝ տեղեկատվություն տրամադրող հաստատություն

1. Սույնով սահմանվում է կենսաբանական անվտանգության տեղեկատվություն տրամադրող հաստատությունը, որպես տեղեկատվություն տրամադրող մեխանիզմի մի մաս, համաձայն Կոնվենցիայի 18 հոդվածի 3-րդ կետի, հետևյալ նպատակներով.

ա) դյուրացնել կենդանի վերափոխված օրգանիզմների վերաբերյալ գիտական, տեխնիկական, բնապահպանական և իրավական տեղեկատվության և փորձի փոխանակումը,

բ) Արձանագրության իրականացման նպատակով Կողմերին աջակցություն ցուցաբերել, հաշվի առնելով զարգացող երկրներ հանդիսացող Կողմերի, մասնավորապես, առավել թույլ զարգացած և, այդ թվում, զարգացող փոքր կղզի-պետությունների, անցումային տնտեսությամբ երկրների, ինչպես նաև ծագման և զենետիկական բազմազանության կենտրոններ հանդիսացող երկրների հատուկ կարիքները:

2. Կենսաբանական անվտանգության՝ տեղեկատվություն տրամադրող հաստատությունը կծառայի որպես միջոց, որով տարածվում է տեղեկատվություն վերոհիշյալ 1-ին կետի նպատակներով: Այն կապահովի Արձանագրության իրականացման հետ կապված՝ Կողմերից տրամադրված տեղեկատվության մատչելիությունը: Այն, հնարավորության դեպքում, կապահովի նաև կենսանվտանգության ոլորտում տեղեկատվության փոխանակման այլ միջազգային մեխանիզմների մատչելիությունը:

3. Զվտանգելով գաղտնի տեղեկատվության պաշտպանությունը՝ յուրաքանչյուր Կողմ կենսանվտանգության՝ տեղեկատվություն տրամադրող հաստատությանը կտրամադրի ցանկացած տեղեկատվութ-

յուն, որն անհրաժեշտ է տրամադրել սույն Արձանագրության համաձայն, և

ա) Արձանագրության իրականացմանն ուղղված գոյություն ունեցող ցանկացած օրենք, կանոն և ղեկավար սկզբունք, ինչպես նաև նախապես հիմնավորված համաձայնության ընթացակարգի կիրառման համար Կողմերի կողմից պահանջվող տեղեկատվություն,

բ) ցանկացած երկկողմ, տարածաշրջանային և բազմակողմ համաձայնագրի պայմանավորվածություն,

գ) 15 հոդվածին համապատասխան աշխատակարգային գործընթացի շրջանակներում իրականացվող կենդանի վերափոխված օրգանիզմների նկատմամբ Կողմի կատարած վտանգի գնահատման կամ բնապահպանական դիտարկումների արդյունքների ամփոփում, անհրաժեշտության դեպքում ներառելով համապատասխան տեղեկատվություն կենդանի վերափոխված օրգանիզմներ պարունակող մթերքների մասին, այսինքն՝ այն վերանշակված նյութերի վերաբերյալ, որոնք առաջացել են ժամանակակից կենսատեխնոլոգիաների միջոցով ստացված կենդանի վերափոխված օրգանիզմներից և պարունակում են հայտնաբերման ենթարկվող՝ վերարտադրվող գենետիկական նյութի նոր համակցություններ,

դ) իր վերջնական որոշումները կենդանի վերափոխված օրգանիզմներ ներմուծելու կամ ազատ արձակման վերաբերյալ,

ե) 33 հոդվածի համաձայն ներկայացվող զեկույցներ, ներառյալ նախապես հիմնավորված համաձայնության ընթացակարգի իրականացման վերաբերյալ զեկույցները:

4. Կենսանվտանգության տեղեկատվություն տրամադրող հաստատության գործունեության ձեւերը (ներառյալ գործունեության վերաբերյալ զեկույցները) կքննարկվեն և կընդունվեն սույն Արձանագրության Կողմերի հանդիպում հանդիսացող Կողմերի կոնֆերանսի կողմից՝ առաջին նիստի ժամանակ, և կվերանայվեն հետագայում:

Հոդված 21

Գաղտնի տեղեկատվություն

1. Ներմուծող Կողմը ծանուցողին թույլ կտա նշել, թե սույն Արձանագրությամբ նախատեսված ընթացակարգերի համաձայն ներկայացված կամ ներմուծող Կողմից որպես Արձանագրության՝ նախապես հիմնավորված համաձայնության ընթացակարգի մաս պահանջած որ տեղեկատվությունն է պետք դիտարկել որպես գաղտնի: Այդ դեպքերում, խնդրանքի առկայությամբ, կտրամադրվի հիմնավորում:

2. Ներմուծող Կողմը ծանուցողի հետ խորհրդատվություն կանցկացնի այն դեպքում, եթե որոշի, որ ծանուցողի կողմից որպես գաղտնի նշված տեղեկատվությունը չի կարող այդպիսին համարվել և, մինչև որեւէ հրապարակումը, խնդրանքի դեպքում, կհայտնի ծանուցողին իր որոշման մասին, նշելով պատճառներն ու մինչև հրապարակումը ապահովելով խորհրդակցության անցկացման և որոշման ներքին վերանայման հնարավորությունը:

3. Յուրաքանչյուր Կողմ կպահպանի սույն Արձանագրության շրջանակներում ստացված գաղտնի տեղեկատվությունը, ներառյալ սույն Արձանագրությամբ նախապես հիմնավորված համաձայնության ընթացակարգի համատեքստում ստացված ցանկացած գաղտնի տեղեկատվություն: Յուրաքանչյուր Կողմ կապահովի այդպիսի տեղեկատվության պահպանության համար անհրաժեշտ գործընթացները և կպահպանի գաղտնիությունը ոչ պակաս հուսալի, քան դա նախատեսված է իր սեփական կենդանի վերափոխված օրգանիզմների վերաբերյալ տեղեկատվության գաղտնիության համար:

4. Ներմուծող Կողմը նման տեղեկատվությունը չի օգտագործի առևտրային նպատակով, բացի այն դեպքից, երբ առկա է ծանուցողի գրավոր համաձայնությունը:

5. Եթե ծանուցողը հետ է վերցնում կամ հետ է վերցրել ծանուցումը, ներմուծող Կողմը պահպանում է առևտրային և արդյունաբերական տեղեկատվության գաղտնիությունը, ներառյալ հետազոտությունների և մշակումների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև այն տեղեկատվությունը, որի գաղտնիության վերաբերյալ Կողմի և ծանուցողի միջև կա անհամաձայնություն:

6. Զխախտելով վերոհիշյալ 5-րդ կետը՝ գաղտնի չի համարվում հետևյալ տեղեկատվությունը.

- ա) ծանուցողի անվանումը և հասցեն,
- բ) կենդանի վերափոխված օրգանիզմի կամ օրգանիզմների ընդհանուր նկարագիրը,
- գ) կենսաբանական բազմազանության պահպանության և կայուն օգտագործման վրա անբարենպաստ ազդեցության ռիսկի գնահատման ամփոփումը, հաշվի առնելով նաև մարդու առողջությանը սպառնացող վտանգը,
- դ) արտակարգ իրավիճակներում միջոցառումների անցկացման ցանկացած մեթոդ և ծրագիր:

Հ ո դ վ ա ծ 22

Չնարավորությունների ստեղծումը

1. Կողմերը, մարդկային ռեսուրսների և կենսաբանական անվտանգության, այդ թվում՝ կենսատեխնոլոգիայի ոլորտներում կազմակերպչական հնարավորությունների զարգացման և/կամ ամրապնդման շրջանակներում կհամագործակցեն այնքանով, որքանով դա անհրաժեշտ է զարգացող երկրներ հանդիսացող Կողմերում, մասնավորապես առավել թույլ զարգացած երկրներում կամ զարգացող փոքր կղզի-պետություններում և անցումային տնտեսությամբ Կողմեր հանդիսացող երկրներում, սույն Արձանագրությունը արդյունավետ իրականացնելու համար (այդ թվում՝ առկա գլոբալ, տարածաշրջանային, ենթատարածաշրջանային, ազգային հաստատությունների ու կազմակերպություն-

ների և, անհրաժեշտության դեպքում, մասնավոր սեկտորի ներգրավմանն աջակցելու միջոցով):

2. Համագործակցության բնագավառում 1-ին կետի նպատակների իրականացման համար կենսանվտանգության ոլորտում հնարավորություններ ստեղծելիս ամբողջապես հաշվի են առնվում զարգացող երկիր հանդիսացող Կողմերի, մասնավորապես առավել թույլ զարգացած երկրների և զարգացող փոքր կղզի-պետությունների կարիքները, կապված ֆինանսական ռեսուրսների, տեխնոլոգիայի մատչելիության ու փոխանցման և know-how-ի հետ, և Կոնվենցիայի համապատասխան դրույթների համաձայն: Կախված յուրաքանչյուր Կողմի տարբեր պայմաններից, հնարավորություններից և պահանջներից՝ հնարավորությունների ստեղծմանն ուղղված համագործակցությունն ընդգրկում է գիտական և տեխնիկական կադրերի պատրաստումը կենսատեխնոլոգիայի պատշաճ և անվտանգ օգտագործման, կենսանվտանգության շահերից բխող ռիսկերի գնահատման և ռիսկերի կարգավորման ուղղությամբ, ինչպես նաև կենսանվտանգության ոլորտում տեխնոլոգիական և կազմակերպչական հնարավորությունների ընդլայնումը: Անցումային տնտեսությամբ երկրներ հանդիսացող Կողմերի պահանջները նույնպես ամբողջությամբ հաշվի կառնվեն կենսանվտանգության ոլորտում նման հնարավորությունների ստեղծման դեպքում:

Հ ո ղ վ ա ծ 23

Հանրության իրազեկությունը և մասնակցությունը

Կողմերը՝

ա) կաջակցեն և կնպաստեն հանրության իրազեկմանը, կրթմանը և մասնակցությանը կենսաբանական բազմազանության պահպանման ու կայուն օգտագործման հետ կապված կենդանի վերափոխված օրգանիզմների անվտանգ փոխադրմանը, վերամշակմանը և օգտագործմանը՝ հաշվի առնելով նաև մարդու առողջությանը սպառնացող վտանգը. այս դեպքում Կողմե-

րը, ըստ անհրաժեշտության, կհամագործակցեն այլ պետությունների և միջազգային մարմինների հետ,

բ) ջանքեր կգործադրեն, որպեսզի հանրության տեղեկացման և կրթման գործընթացը ընդգրկի տեղեկատվության մատչելիություն այն կենդանի վերափոխված օրգանիզմների վերաբերյալ, որոնք կարող են ներմուծվել սույն Արձանագրությանը համապատասխան:

2. Կողմերը, իրենց համապատասխան օրենսդրությանը համապատասխան, կխորհրդակցեն հանրության հետ կենդանի վերափոխված օրգանիզմների վերաբերյալ որոշումների ընդունման ընթացքում և հանրությանը կտրամադրեն այդ որոշումների արդյունքները՝ ապահովելով տեղեկատվության գաղտնիության պահպանումը՝ 21 հոդվածին համապատասխան:

3. Յուրաքանչյուր Կողմ ջանքեր կգործադրի՝ ապահովելու համար իր երկրի հանրության իրազեկումը կենսանվտանգության՝ տեղեկատվություն տրամադրող հաստատությանը հասանելիության միջոցների վերաբերյալ:

Հոդված 24

Կողմեր չհանդիսացող պետություններ

1. Կենդանի վերափոխված օրգանիզմների անդրսահմանային տեղափոխությունը Կողմերի և Կողմեր չհանդիսացող պետությունների միջև պետք է համապատասխանի սույն Արձանագրության նպատակներին: Կողմերը կարող են Կողմեր չհանդիսացող պետությունների հետ կնքել երկկողմ, տարածաշրջանային և բազմակողմ համաձայնագրեր ու պայմանավորվածություններ ձեռք բերել տվյալ անդրսահմանային տեղափոխությունների վերաբերյալ:

2. Կողմերը կխրախուսեն Կողմեր չհանդիսացող պետությունների միանալը սույն Արձանագրությանը և կենսանվտանգության՝ տեղեկատ-

վություն տրամադրող հաստատությանը կտրամադրեն իրենց իրավասության տակ գտնվող տարածքներում ազատ արձակվող կամ այդ տարածքներ ներմուծվող կամ այդտեղից դուրս բերվող կենդանի վերափոխված օրգանիզմների վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն:

Հոդված 25

Անդրսահմանային անօրինական տեղափոխություններ

1. Յուրաքանչյուր Կողմ կհաստատի համապատասխան ներքին միջոցներ, որոնք կանխում և համապատասխան դեպքերում նաև պատիժ են նախատեսում կենդանի վերափոխված օրգանիզմների անդրսահմանային այն տեղափոխումների համար, որոնք խախտում են սույն Արձանագրության իրականացմանն ուղղված իրենց ներքին միջոցները: Նման տեղափոխությունները կհամարվեն անօրինական:
2. Անդրսահմանային անօրինական տեղափոխությունների դեպքում համապատասխան Կողմը կարող է խնդրել ծագման Կողմից, որ, կախված հանգամանքներից, նա իր հաշվին վերացնի կենդանի վերափոխված օրգանիզմները՝ վերադարձնելու կամ ոչնչացնելու միջոցով:
3. Յուրաքանչյուր Կողմ կենսանվտանգության տեղեկատվություն տրամադրող մարմնին մատչելի կդարձնի իրեն վերաբերող անդրսահմանային անօրինական տեղափոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը:

Հոդված 26

Սոցիալ-տնտեսական նկատառումներ

1. Կողմերը սույն Արձանագրության կամ վերջինիս իրականացման իրենց ներքին միջոցների շրջանակներում ներմուծման վերաբերյալ որոշում մշակելիս, իրենց միջազգային պարտականությունների համաձայն, կարող են հաշվի առնել սոցիալ-տնտեսական նկատառումները, որոնք պայմանավորված են կենսաբազմազանության պահպանության և կայուն օգտագործման վրա կենդանի վերափոխված օրգանիզմների ազդեցությամբ, հատկապես տեղի համայնքների նկատմամբ կենսաբանական բազմազանության ազդեցության գնահատմամբ:
2. Խրախուսվում է կողմերի համագործակցությունը կենդանի վերափոխված օրգանիզմների ցանկացած, մասնավորապես, տեղի համայնքների նկատմամբ ունեցած սոցիալ-տնտեսական ազդեցությունների գնահատման, գիտական հետազոտությունների անցկացման և տեղեկատվության փոխանակման ոլորտում:

Հոդված 27

Պատասխանատվություն և փոխհատուցում

Սույն Արձանագրության Կողմերի հանդիպում հանդիսացող Կողմերի կոնֆերանսն իր առաջին նիստի ժամանակ ընդունում է կենդանի վերափոխված օրգանիզմների անդրսահմանային տեղափոխման արդյունքում պատճառված վնասների համար պատասխանատվության և հատուցման ոլորտներում միջազգային կանոնների և ընթացակարգերի մշակման համապատասխան գործընթաց, վերլուծելով և հաշվի առնելով նման խնդիրների վերաբերյալ միջազգային իրավունքում գոյություն ունեցող ընթացակարգերը, և ջանքեր կգործադրի չորս տարվա ընթացքում այդ գործընթացն ավարտելու ուղղությամբ:

Հոդված 28

Ֆինանսավորման մեխանիզմը և ֆինանսական ռեսուրսները

1. Սույն Արձանագրության իրականացման համար ֆինանսական ռեսուրսների հարցը քննարկելիս, Կողմերը հաշվի կառնեն Կոնվենցիայի 20 հոդվածի դրույթները:
2. Կոնվենցիայի 21 հոդվածի համաձայն ստեղծված ֆինանսավորման մեխանիզմը ղեկավարման համար իր կողմից լիազորված կազմակերպչական կառույցի միջոցով նաև սույն Արձանագրության ֆինանսավորման մեխանիզմն է:
3. Սույն Արձանագրության 22 հոդվածով սահմանված հնարավորությունների ստեղծման վերաբերյալ Կողմերի կոնֆերանսը, որը գործում է որպես սույն Արձանագրության Կողմերի հանդիպում, վերոհիշյալ 2-րդ կետում նշված ֆինանսավորման մեխանիզմի ղեկավար ցուցումները մշակելիս պետք է հաշվի առնի զարգացող երկրներ հանդիսացող Կողմերի և, մասնավորապես, առավել թույլ զարգացած երկրների ու զարգացող փոքր կղզի-պետությունների ֆինանսական կարիքները:
4. Վերը նշված 1-ին կետի համատեքստում Կողմերը հաշվի կառնեն նաև զարգացող երկրներ հանդիսացող Կողմերի, մասնավորապես, առավել թույլ զարգացած երկրների և զարգացող փոքր կղզի-պետությունների ու անցումային տնտեսությամբ Կողմեր հանդիսացող երկրների կարիքները՝ սույն Արձանագրության նպատակների իրականացման նպատակով իրենց կարիքները որոշելու և իրականացնելու ուղղությամբ ջանքեր գործադրելու հարցերում հնարավորությունների ստեղծման առումով:
5. Կողմերի կոնֆերանսի համապատասխան որոշումներով Կոնվենցիայի ֆինանսավորման մեխանիզմին ներկայացվող ղեկավար

ցուցումները, այդ թվում՝ մինչև սույն Արձանագրության ընդունումը համաձայնեցված ցուցումները, կկիրառվեն *mutatis mutandis* սույն հոդվածի դրույթների նկատմամբ:

6. Ձարգացած երկրներ հանդիսացող Կողմերը կարող են տրամադրել, իսկ զարգացող երկրներ և անցումային տնտեսությամբ երկրներ հանդիսացող Կողմերը սույն Արձանագրության դրույթների իրականացման համար կարող են ֆինանսական և տեխնոլոգիական ռեսուրսներ ստանալ երկկողմ, տարածաշրջանային և բազմակողմ ճանապարհներով:

Հոդված 29

Սույն Արձանագրության Կողմերի հանդիպում հանդիսացող Կողմերի կոնֆերանսը

1. Կողմերի կոնֆերանսը կհանդիսանա սույն Արձանագրության Կողմերի հանդիպում:

2. Կոնվենցիայի Կողմերը, որոնք սույն Արձանագրության Կողմեր չեն հանդիսանում, կարող են մասնակցել սույն Արձանագրության Կողմերի հանդիպում հանդիսացող Կողմերի կոնֆերանսի ցանկացած միստի աշխատանքներին՝ որպես դիտորդներ: Այն դեպքում, երբ Կողմերի կոնֆերանսը հանդես է գալիս որպես սույն Արձանագրության Կողմերի հանդիպում, սույն Արձանագրության շրջանակներում որոշումներն ընդունվում են միայն սույն Արձանագրության Կողմերի կողմից:

3. Երբ Կողմերի կոնֆերանսը հանդես է գալիս որպես սույն Արձանագրության Կողմերի հանդիպում, Կողմերի կոնֆերանսի բյուրոյի ցանկացած անդամ, որը ներկայացնում է Կոնվենցիայի Կողմը, բայց ներկա պահին սույն Արձանագրության Կողմ չի հանդիսանում, կփոխարինվի սույն Արձանագրության Կողմերի կողմից՝ իրենց կազմից ընտրված անդամով:

4. Սույն Արձանագրության Կողմերի հանդիպում հանդիսացող Կողմերի կոնֆերանսը կանոնավոր կերպով կիետևի սույն Արձանագրության դրույթների իրականացմանը և իր մանդատի շրջանակներում կընդունի Արձանագրության արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ որոշումներ: Նա կկատարի սույն Արձանագրությամբ իր վրա դրված համապատասխան գործառույթները և՝

ա) կընդունի հանձնարարականներ սույն Արձանագրության իրականացման համար անհրաժեշտ ցանկացած հարցի վերաբերյալ,

բ) կստեղծի այնպիսի օժանդակ մարմիններ, որոնք անհրաժեշտ կհամարվեն սույն Արձանագրության իրականացման համար,

գ) կպահանջի և, անհրաժեշտության դեպքում, կօգտագործի իրավասու միջազգային կազմակերպությունների, միջկառավարական և ոչ կառավարական մարմինների ծառայություններն ու համագործակցությունը և դրանց տրամադրած տեղեկատվությունը,

դ) կորոշի սույն Արձանագրության 33 հոդվածին համապատասխան ներկայացման ենթակա տեղեկատվության տրամադրման ձևը և պարբերականությունը, կքննարկի այդ տեղեկատվությունը, ինչպես նաև ցանկացած օժանդակ մարմնի կողմից ներկայացված զեկույցները,

ե) անհրաժեշտության դեպքում կուսումնասիրի և կընդունի սույն Արձանագրության և դրա հավելվածների փոփոխությունները, ինչպես նաև ցանկացած լրացուցիչ հավելված, որն անհրաժեշտ կհամարվի սույն Արձանագրության իրականացման համար,

զ) կիրականացնի այնպիսի այլ գործառույթներ, որոնք կարող են պահանջվել սույն Արձանագրության իրականացման համար:

5. Սույն Արձանագրության շրջանակներում *mutatis mutandis* կկիրառվեն Կողմերի կոնֆերանսի ընթացակարգի կանոնները, ինչպես

նաև Կոնվենցիայի ֆինանսական կանոնները, բացառությամբ այն դեպքերի, երբ սույն Արձանագրության Կողմերի հանդիպում հանդիսացող Կողմերի կոնֆերանսը կարող է միաձայն ընդունել այլ որոշում:

6. Սույն Արձանագրության Կողմերի հանդիպում հանդիսացող Կողմերի կոնֆերանսի առաջին նիստը կիրավիրվի քարտուղարության կողմից՝ Կողմերի կոնֆերանսի այն առաջին նիստի հետ միաժամանակ, որը նախատեսված է անցկացնել սույն Արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո: Սույն Արձանագրության Կողմերի հանդիպում հանդիսացող Կողմերի կոնֆերանսի հետագա հերթական նիստերը կանցկացվեն Կողմերի կոնֆերանսի հերթական նիստերի հետ միաժամանակ, եթե սույն Արձանագրության Կողմերի հանդիպում հանդիսացող Կողմերի կոնֆերանսը այլ որոշում չընդունի:

7. Սույն Արձանագրության Կողմերի հանդիպում հանդիսացող կողմերի կոնֆերանսի արտահերթ նիստերը կիրավիրվեն այն դեպքում, երբ սույն Արձանագրության Կողմերի հանդիպում հանդիսացող կողմերի կոնֆերանսը այն անհրաժեշտ համարի, կամ այդ նիստերը կիրավիրվեն ցանկացած Կողմի գրավոր խնդրանքով՝ պայմանով, որ քարտուղարության կողմից խնդրանքը Կողմերին ուղարկվելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, այն հավանություն կստանա Կողմերի առնվազն ավելի քան մեկ երրորդի կողմից:

8. ՄԱԿ-ը, նրա մասնագիտացված հաստատությունները և Ատոմային էներգիայի միջազգային գործակալությունը, ինչպես նաև վերջիններիս անդամ կամ դիտորդ հանդիսացող ցանկացած պետություն, որը Կոնվենցիայի Կողմ չի հանդիսանում, կարող է ներկայացվել սույն Արձանագրության Կողմերի հանդիպում հանդիսացող Կողմերի կոնֆերանսի նիստերի ժամանակ՝ որպես դիտորդ: Ցանկացած ազգային կամ միջազգային, կառավարական կամ ոչ կառավարական մարմին կամ հաստատություն, որն իրավասու է սույն Արձանագրության մեջ ընդգրկված հարցերում և որը տեղեկացրել է քարտուղարությանը սույն Արձանագրության Կողմերի հանդիպում հանդիսացող Կողմերի կոնֆերանսին որպես դիտորդ ներկայացված լինելու իր ցանկության մասին,

կարող է թույլատրվել մասնակցելու, եթե դրա դեմ չի առարկում Կողմերի առնվազն մեկ երրորդը: Բացառությամբ սույն հոդվածով նախատեսված այլ դեպքերի՝ դիտորդների թույլտվությունը և մասնակցությունը կկարգավորվեն 5-րդ կետում նշված ընթացակարգերի կանոններով:

Հոդված 30

Օժանդակ մարմիններ

1. Կոնվենցիայի կողմից կամ նրա շրջանակներում ստեղծված ցանկացած օժանդակ մարմին կարող է, սույն Արձանագրության Կողմերի հանդիպում հանդիսացող Կողմերի կոնֆերանսի որոշման համաձայն, Արձանագրությանը ծառայություններ ցուցաբերել, և այս դեպքում Կողմերի հանդիպումն է որոշում այն գործառույթները, որոնք պետք է կատարի տվյալ մարմինը:

2. Կոնվենցիայի Կողմերը, որոնք սույն Արձանագրության Կողմեր չեն հանդիսանում, կարող են մասնակցել ցանկացած օժանդակ մարմնի ժողովի աշխատանքներին՝ որպես դիտորդներ: Այն դեպքերում, երբ Կոնվենցիայի օժանդակ մարմինը հանդես է գալիս որպես սույն Արձանագրության օժանդակ մարմին, Արձանագրության շրջանակներում որոշումները ընդունվում են միայն Արձանագրության Կողմերի կողմից:

3. Այն դեպքերում, երբ Կոնվենցիայի օժանդակ մարմինը կատարում է իր գործառույթները սույն Արձանագրության հետ կապված հարցերի վերաբերյալ, այդպիսի օժանդակ մարմնի բյուրոյի որևէ անդամ՝ Կոնվենցիայի Կողմին ներկայացնող, սակայն այդ պահին Արձանագրության Կողմ չհանդիսացող, փոխարինվում է Արձանագրության Կողմերից ընտրված կամ նրանց կազմից ընտրված անդամով:

Հոդված 31

Քարտուղարություն

1. Կոնվենցիայի 24 հոդվածի համաձայն ստեղծված քարտուղարությունը հանդես կգա որպես սույն Արձանագրության քարտուղարություն:
2. Քարտուղարության գործառույթների վերաբերյալ Կոնվենցիայի 24 հոդվածի 1-ին կետը կիրառվում է *mutatis mutandis* սույն Արձանագրության նկատմամբ:
3. Եթե սույն Արձանագրության համար քարտուղարության ծառայությունների ծախսերը տարբերվում են այլ ծախսերից, դրանք փոխհատուցում են Կողմերը: Սույն Արձանագրության Կողմերի հանդիպում հանդիսացող Կողմերի կոնֆերանսն իր առաջին նիստի ժամանակ որոշում է ընդունում այս նպատակով անհրաժեշտ բյուջետային միջոցառումների վերաբերյալ:

Հոդված 32

Կապը Կոնվենցիայի հետ

Եթե սույն Արձանագրությամբ այլ բան նախատեսված չէ, ապա Կոնվենցիայի՝ իր Արձանագրություններին վերաբերող դրույթները կիրառվում են սույն Արձանագրության նկատմամբ:

Հոդված 33

Վերահսկողությունը և հաշվետվությունը

Յուրաքանչյուր Կողմ սույն Արձանագրության շրջանակներում իր պարտականությունների կատարման նկատմամբ իրականացնում է վերահսկողություն և սույն Արձանագրության Կողմերի հանդիպում հանդիսացող Կողմերի կոնֆերանսի կողմից որոշված պարբերականությամբ հաշվետվություն է ներկայացնում նշված կոնֆերանսին՝ Արձանագրության իրականացման համար ձեռնարկվող միջոցառումների մասին:

Հոդված 34

Ֆամապատասխանություն

Սույն Արձանագրության Կողմերի հանդիպում հանդիսացող Կողմերի կոնֆերանսն իր առաջին նիստի ժամանակ քննարկում և հաստատում է համատեղ գործընթացները և կազմակերպչական մեխանիզմները՝ սույն Արձանագրության դրույթների համապատասխանությունը ապահովելու համար, և քննարկում է համապատասխանության չպահպանման դեպքերը: Այդպիսի գործընթացները և մեխանիզմները ներառում են դրույթներ համապատասխան դեպքերում խորհուրդ տալու և օգնություն ցուցաբերելու վերաբերյալ: Նրանք օգտագործվում են անկախ Կոնվենցիայի 27 հոդվածով սահմանված վեճերի կարգավորման ընթացակարգերից ու մեխանիզմներից և կիրառվում են վերջիններիս չվնասելով:

Հոդված 35

Գնահատում և դիտարկում

Սույն Արձանագրության Կողմերի հանդիպում հանդիսացող

Կողմերի կոնֆերանսը սույն Արձանագրության ուժի մեջ մտնելուց հինգ տարի անց և այնուհետև, առնվազն հինգ տարին մեկ իրականացնում է Արձանագրության արդյունավետության գնահատումը (ներառյալ վերջինիս ընթացակարգերի և հավելվածների գնահատումը):

Հոդված 36

Ստորագրում

Սույն Արձանագրությունը բաց է պետությունների և տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպությունների ստորագրման համար՝ Նայրոբիում՝ Միավորված ազգերի կազմակերպության գրասենյակում, 2000թ. մայիսի 15-26-ը, և Նյու Յորքում՝ Միավորված ազգերի կազմակերպության կենտրոնակայանում, 2000թ. հունիսի 5-ից մինչև 2001թ. հունիսի 4-ը:

Հոդված 37

Ուժի մեջ մտնելը

1. Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում Կոնվենցիայի Կողմ հանդիսացող պետությունների կամ տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպությունների կողմից վավերագիրը, ընդունման, հաստատման կամ միանալու վերաբերյալ հիսուներորդ փաստաթուղթը ի պահ հանձնվելու օրվանից իննսուներորդ օրը:

2. Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն պետության կամ տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպության համար, որը վավերացնում, ընդունում, հաստատում կամ միանում է սույն Արձանագրությանը՝ վերջինիս ուժի մեջ մտնելուց հետո, համաձայն վերոհիշյալ 1-ին կետի, այդ պետության կամ տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպության կողմից վավերա-

գիրը, ընդունման, հաստատման կամ միանալու վերաբերյալ փաստաթուղթը ի պահ հանձնելուց հետո իննսուներորդ օրը կամ այն օրը, երբ Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այդ պետության կամ տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպության համար՝ նայած, թե որն ավելի ուշ տեղի կունենա:

3. Վերոհիշյալ 1-ին և 2-րդ կետերի նպատակների համար տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպության կողմից ի պահ հանձնված փաստաթղթերից ոչ մեկը չի համարվում լրացուցիչ այդպիսի կազմակերպության անդամ պետությունների կողմից ի պահ հանձնված փաստաթղթերի:

Հոդված 38

Վերապահումներ

Սույն Արձանագրության վերաբերյալ չի կարող ոչ մի վերապահում արվել:

Հոդված 39

Սույն Արձանագրությունից դուրս գալը

1. Սույն Արձանագրությունը որևէ Կողմի համար ուժի մեջ մտնելու օրվանից երկու տարի հետո այդ Կողմը կարող է ցանկացած ժամանակ դուրս գալ Արձանագրությունից՝ ավանդապահին ուղարկելով գրավոր ծանուցում:

2. Արձանագրությունից նման ձևով կարելի է դուրս գալ՝ դուրս գալու վերաբերյալ ծանուցումը ավանդապահի ստանալու օրվանից մեկ տարի հետո կամ ավելի ուշ, ինչպես նշված կլինի դուրս գալու մասին ծանուցման մեջ:

Հոդված 40

Հավասարազոր տեքստեր

Սույն Արձանագրության բնօրինակը, որի արաբերեն, չինարեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն և իսպաներեն տեքստերը հավասարազոր են, ի պահ է հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին:

Ի վկայություն վերոշարադրյալի՝ պատշաճ կերպով լիազորված ներքոստորագրյալները ստորագրեցին սույն Արձանագրությունը:

Կատարված է Մոնրեալում 2000թ. հունվարի 29-ին:



Հավելված I

8, 10 և 13 հոդվածների համաձայն ծանուցումներում պարունակվող անհրաժեշտ տեղեկատվություն

- ա)** Արտահանողի անունը, հասցեն և նրա հետ հաղորդակցման համար անհրաժեշտ տվյալները,
- բ)** Ներմուծողի անունը, հասցեն և նրա հետ հաղորդակցման համար անհրաժեշտ տվյալները,
- գ)** արտահանող պետությունում կենդանի վերափոխված օրգանիզմի անվանումը, բնութագրող հատկանիշները և կենսանվտանգության մակարդակի ներքին դասակարգումը, եթե այդպիսիք կան,
- դ)** անդրսահմանային փոխադրման իրականացման կամ նա-

- խատեսվող ժամկետը(ները), եթե այդպիսիք հայտնի են,
- ե)** ընդունող (ռեցիպիենտ) օրգանիզմի կամ ծնողական օրգանիզմների տակսոնոմիկ կարգավիճակը, ընդհանուր անվանումը, հավաքման կամ ձեռք բերելու կետը, ինչպես նաև կենսանվտանգության վերաբերյալ բնութագրերը,
- զ)** ընդունող (ռեցիպիենտ) օրգանիզմի և/կամ ծնողական օրգանիզմների ծագման կենտրոնները և գենետիկական բազմազանության կենտրոնները, եթե այդպիսիք հայտնի են, և այն բնակավայրի նկարագիրը, որտեղ օրգանիզմները կարող են ունենալ գոյատևման կամ արագ բազմանալու համապատասխան պայմաններ,
- է)** դոնոր օրգանիզմի կամ օրգանիզմների տակսոնոմիկ կարգավիճակը, ընդհանուր անվանումը, հավաքման կամ ձեռք բերելու կետը, ինչպես նաև կենսանվտանգության վերաբերյալ բնութագրերը,
- ը)** նուկլեինաթթվի նկարագիրը կամ փոփոխությունը, կիրառվող մեթոդները և կենդանի վերափոխված օրգանիզմի՝ ստացված առանձնահատկությունները,
- թ)** կենդանի վերափոխված օրգանիզմների կամ մթերքների, մասնավորապես այն վերամշակված նյութերի ենթադրվող օգտագործումը, որոնք առաջացել են ժամանակակից կենսատեխնոլոգիայի միջոցով ստացված կենդանի վերափոխված օրգանիզմից և պարունակում են հայտնաբերման ենթարկվող վերարտադրվող գենետիկական նյութի նոր համակցություններ,
- ժ)** փոխանցման ենթակա կենդանի վերափոխված օրգանիզմի քանակը կամ ծավալը,
- ժա)** ռիսկի գնահատման նախորդ և ընթացիկ գեկույցը՝ համաձայն III հավելվածի,
- ժբ)** առաջարկվող մեթոդներ՝ անվտանգ վերամշակման, պահեստավորման, տեղափոխման և օգտագործման (ներառյալ, անհրաժեշտության դեպքում, փաթեթավորման, պիտակավորման, փաստագրման, տեղաբաշխման և, պատահարների դեպքում, միջոցների ձեռնարկմանը վերաբերող ընթացակարգերը),

ժգ) կենդանի վերափոխված օրգանիզմի աշխատակարգային կարգավիճակը արտահանող պետության սահմանների շրջանակներում (օրինակ՝ արգելված է արդյոք այն արտահանող պետությունում, կա՞ն այլ սահմանափակումներ, թույլատրված է նրա ձեռք բերումը) և, եթե արտահանող պետությունում կենդանի վերափոխված օրգանիզմն արգելված է, արգելքի պատճառը կամ պատճառները,

ժդ) տեղափոխման ենթակա կենդանի վերափոխված օրգանիզմի վերաբերյալ այլ պետություններին արտահանողի կողմից ուղղված ցանկացած ծանուցման արդյունքը և այդպիսի ծանուցման ուղարկման նպատակը,

ժե) հայտարարություն այն մասին, որ վերը նշված տեղեկատվությունը փաստացի ճշգրիտ է:

Հավելված II

11 հոդվածի համաձայն որպես մթերք կամ կեր անմիջական օգտագործման կամ վերամշակման համար նախատեսված կենդանի վերափոխված օրգանիզմների վերաբերյալ պահանջվող տեղեկատվություն

ա) Ներքին օգտագործման համար որոշում ընդունելու նպատակով հայտ ներկայացնողի անվանումը և նրա հետ հաղորդակցման համար անհրաժեշտ տվյալները,

բ) այն մարմնի անվանումը և նրա հետ հաղորդակցման համար անհրաժեշտ տվյալները, որն ընդունում է վերոհիշյալ որոշումը,

գ) կենդանի վերափոխված օրգանիզմի անվանումը և բնորոշող հատկանիշները,

դ) զենային վերափոխումների նկարագիրը, օգտագործված մեթոդները և դրանց հետևանքով ստացված կենդանի վերափոխված օրգանիզմի առանձնահատկությունները,

ե) կենդանի վերափոխված օրգանիզմի բոլոր առանձնահատուկ որոշիչները,

զ) ընդունող (ռեցիպիենտ) օրգանիզմի կամ ծնողական օրգանիզմների տակսոնոմիկ կարգավիճակը, ընդհանուր անվանումը, հավաքելու կամ ձեռք բերելու կետը, ինչպես նաև կենսանվտանգության վերաբերյալ բնութագրերը,

է) ընդունող (ռեցիպիենտ) օրգանիզմի և/կամ ծնողական օրգանիզմների ծագման կենտրոնները և գենետիկական բազմազանության կենտրոնները, եթե այդպիսիք հայտնի են, և այն բնակավայրի նկարագիրը, որտեղ օրգանիզմները կարող են ունենալ գոյատևման կամ արագ բազմանալու համապատասխան պայմաններ,

ը) դոնոր օրգանիզմի կամ օրգանիզմների տակսոնոմիկ կարգավիճակը, ընդհանուր անվանումը, հավաքելու կամ ձեռք բերելու կետը, ինչպես նաև կենսանվտանգության վերաբերյալ բնութագրերը,

թ) կենդանի վերափոխված օրգանիզմի հավանության արժանացած օգտագործումը,

ժ) III հավելվածի համաձայն՝ ռիսկի գնահատման հաշվետվությունը,

ժա) առաջարկվող մեթոդներ անվտանգ վերանշակման, պահեստավորման, տեղափոխման և օգտագործման (ներառյալ, անհրաժեշտության դեպքում, փաթեթավորման, պիտակավորման, փաստագրման, տեղաբաշխման և, պատահարների դեպքում, միջոցների ձեռնարկմանը վերաբերող ընթացակարգերը):

Հավելված III

Ռիսկի գնահատում

Նպատակը

1. Սույն Արձանագրության համաձայն ռիսկի գնահատման նպատակն է հայտնաբերել և գնահատել կենսաբանական բազմազանության (հնարավոր ընդունող միջավայրում) պահպանման և կայուն օգտագործման վրա կենդանի վերափոխված օրգանիզմների հնարավոր անբարենպաստ ազդեցությունը՝ հաշվի առնելով մարդու առողջությանը սպառնացող վտանգը:

Ռիսկի գնահատման օգտագործում

2. Ռիսկի գնահատման արդյունքները, *inter alia*, իրավասու մարմինների կողմից օգտագործվում են կենդանի վերափոխված օրգանիզմների վերաբերյալ հիմնավորված որոշումների ընդունման համար:

Հիմնական սկզբունքները

3. Ռիսկի գնահատումը պետք է կատարվի գիտականորեն հիմնավորված և հստակ ձևով: Գնահատման ընթացքում կարող են հաշվի առնվել փորձագետի խորհուրդը և համապատասխան միջազգային կազմակերպությունների կողմից մշակված ղեկավար ցուցումները:

4. Գիտելիքների կամ գիտական հիմնավորման բացակայությունը չի կարող մեկնաբանվել որպես որոշակի մակարդակի ռիսկի առկայություն, բացակայություն կամ ռիսկի հնարավոր առկայություն:

5. Կենդանի վերափոխված օրգանիզմների կամ մթերքների, այսինքն՝ կենդանի վերափոխված օրգանիզմներից առաջացած և ժամանակակից կենսատեխնոլոգիայի օգտագործման արդյունքում ստացված գենետիկական նյութերի վերարտադրման նոր համակցություններ պարունակող վերամշակված նյութերի հետ կապված ռիսկերը պետք է դիտվեն այն ռիսկի տեսանկյունից, որն առաջանում է հնարավոր ըն-

դուռնող միջավայրում չվերափոխված ընդունող օրգանիզմների (ռեցիպիենտների) կամ ծնողական օրգանիզմների կողմից:

6. Ռիսկի գնահատումը պետք է իրականացվի «դեպքից դեպք» սկզբունքով: Պահանջվող տեղեկատվությունը կարող է յուրաքանչյուր որոշակի դեպքում տարբերվել բնույթով և մանրամասներով՝ կախված համապատասխան կենդանի վերափոխված օրգանիզմից, նրա հավանական օգտագործումից կամ հնարավոր ընդունող միջավայրից:

Մեթոդիկա

7. Մի կողմից ռիսկի գնահատման համար հնարավոր է որոշակի հարցերի շուրջ լրացուցիչ տեղեկատվության անհրաժեշտություն, որը կարող է ի հայտ գալ և պահանջվել գնահատման ընթացքում, մյուս կողմից՝ որոշ դեպքերում, այլ հարցերի վերաբերյալ տեղեկատվությունը կարող է էական չլինել:

8. Առաջադրված նպատակին հասնելու համար ռիսկի գնահատումը, անհրաժեշտության դեպքում պետք է ներառի հետևյալ փուլերը.

ա) ցանկացած նոր գենոտիպային և ֆենոտիպային բնութագրի բացահայտում, կապված կենդանի վերափոխված օրգանիզմի հետ, որը հնարավոր ընդունող միջավայրում կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ կենսաբանական բազմազանության վրա՝ հաշվի առնելով մարդու առողջությանը սպառնացող վտանգը,

բ) նման անբարենպաստ հետևանքների փաստացի առաջացման հավանականության աստիճանի գնահատում՝ հաշվի առնելով կենդանի վերափոխված օրգանիզմի նկատմամբ ազդեցության աստիճանը և տեսակը հնարավոր ընդունող միջավայրում,

գ) հետևանքների գնահատում՝ այն դեպքում, եթե այդպիսի անբարենպաստ ազդեցությունն իրականում տեղի ունենա,

դ) կենդանի վերափոխված օրգանիզմի առաջացրած ընդհանուր ռիսկի գնահատում՝ հիմնվելով անբարենպաստ ազդեցության առաջացման հավանականության և հետևանքների գնահատման վրա,

ե) առաջարկության ներկայացում ռիսկի ընդունելության կամ կարգավորելիության վերաբերյալ (ներառյալ, անհրաժեշտության դեպքում, ռիսկերի կարգավորման համար ռազմավարության որոշումը),

զ) այն դեպքում, երբ ռիսկի աստիճանը հստակեցված չէ, իրադրությունը կարող է լուծվել որոշակի հարցերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն պահանջելու կամ ռիսկի կարգավորման համապատասխան ռազմավարության իրականացման և/կամ ընդունող միջավայրում կենդանի վերափոխված օրգանիզմի վերահսկողության միջոցով:

Քննարկվող հարցեր

9. Կախված այս կամ այն դեպքից՝ ռիսկի գնահատման ժամանակ հաշվի են առնվում համապատասխան տեխնիկական և գիտական տվյալները ներքոհիշյալ տարրերի առանձնահատկությունների վերաբերյալ.

ա) Ընդունող (ռեցիպիենտ) օրգանիզմ կամ ծնողական օրգանիզմներ

Ընդունող (ռեցիպիենտ) օրգանիզմի կամ ծնողական օրգանիզմների առանձնահատկությունները (ներառյալ տեղեկատվությունը տաքսոնոմիկ կարգավիճակի, ընդհանուր անվանման, ծագման, ստեղծման և գենետիկական բազմազանության կենտրոնների վերաբերյալ, եթե այդպիսիք հայտնի են, և այն բնակավայրի նկարագիրը, որտեղ օրգանիզմները գոյատևման կամ բազմացման համար կարող են ունենալ համապատասխան պայմաններ):

բ) Դոնոր օրգանիզմ կամ օրգանիզմներ

Դոնոր օրգանիզմների տաքսոնոմիկ կարգավիճակը և ընդհանուր անվանումը, աղբյուրը և համապատասխան կենսաբանական բնութագրերը:

գ) Վեկտոր

Վեկտորի բնութագրերը (ներառյալ նրա բնորոշ հատկանիշները, եթե այդպիսիք կան, աղբյուրը կամ ծագումը և նրա տարածման շրջանակները):

դ) Ներմուծում կամ ներմուծումներ և/կամ փոփոխությունների բնութագրեր

Ներմուծված նուկլեինաթթվի գենետիկական բնութագրերը և դրա կիրառման նպատակը և/կամ փոփոխությունների առանձնահատկությունները:

ե) Կենդանի վերափոխված օրգանիզմ

Կենդանի վերափոխված օրգանիզմին բնորոշ հատկանիշները և կենդանի վերափոխված օրգանիզմի կենսաբանական առանձնահատկությունների և ընդունող (ռեցիպիենտ) օրգանիզմի կամ ծնողական օրգանիզմների բնութագրերի միջև եղած տարբերությունները:

զ) Կենդանի վերափոխված օրգանիզմի հայտնաբերումը և ճշգրտումը

Հայտնաբերման և ճշգրտման առաջարկվող մեթոդները, դրանց ճշգրտությունը, զգայունությունը և հուսալիությունը:

է) Տեղեկատվություն նախատեսվող օգտագործման վերաբերյալ

Տեղեկատվություն կենդանի վերափոխված օրգանիզմի նախատեսվող օգտագործման վերաբերյալ (ներառյալ ընդունող (ռեցիպիենտ) օրգանիզմի կամ ծնողական օրգանիզմների համեմատ նոր կամ վերափոխված օգտագործումը):

ը) Ընդունող միջավայր

Տեղական, աշխարհագրական, կլիմայական և բնապահպանական բնութագրերի մասին տեղեկատվությունը (ներառյալ հնարավոր ընդունող միջավայրում կենսաբանական բազմազանության և ծագման կենտրոնների վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը):